



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1669-1678

17

---

4-64













ՊԱՐՏԱՃԱՆՍԱԶՈՒԹԻՒՆ

ԿՍՄ

ՃԱՆՍԱԶՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ

ՀԱՆԴԵՐՁ Ս. ԳՐՈՑ Վ. ԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Ի ՊԵՏՍ ՀԱՄԱՅՆ ԴԱՍՈՒ ԱՆՁԱՆՑ

Երկասիրեաց

ԳԱՐԵԳԻՆ ԴԱՀԱՆԱՅ Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՍԵՐԱՍՏԱՑԻ

Առաջին հատոր



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

— 1887 —

1878

*[Faint, illegible handwriting throughout the page]*

171  
uz

# ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

## ՃԱՆՍՁՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ

ՀԱՆԳԵՐՁ Ս. ԳՐՈՑ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ

ԻՊԷՏՍ ՀԱՄԱՅՆ ԴԱՍՈՒ ՍՆԶԱՆՑ

ԵՐԿԱԻՐԵԱՑ ԴԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱՅ

Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՍԵՖԱՍՏՈՑԻ

*Բարի եւ ինձ օրհնք թերաւնոյ քո ,  
Բաւն զհազարս ոսկոյ եւ արծաթոյ :*

*(Սաղմ. ճԺԸ. 72.)*

---

معارف عمومية نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر

---

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Կաշաթա Մեծ-Փողոց Թիւ 269

Դասըմ-Պէյ-Խան

— 1887 —


6463-57

Պ ԶԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա. ՎԱԲՈՂԻՎՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ




Պ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆ

Ս. ԵՐՈՒՍՍԱՆԻ

Տ. ԵՍԱՅԵՅՅ ՀՍ. ՆԳՈՒՅԵՍԼ

Ս. ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԵՒ Պ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Վ. ԵՀԱՊԵՏԵԱՆ




Հեղինակի բուն ձեռագիրը ստորագրուած լին

Հարող օրինակներն անվաւեր են:

Քարտի Գրչի Կոնստանտին, Ք. Յուզէրի Գրչի

ՄԱՀ ԱՐԶԱՆ ՅՈՒՐՏ ԳԵՐԵԶՄԱՆ



Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋԻՆՁ ԲԱՐԵԱՅ  
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄՕՐ ԵՂՔՕՐ ԻՄՈՅ

ՊՕԼՍԵՅԵԱՆ ԱԶՆԻԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ  
Մ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ԱՂԱՅԻ

Կանգնեմ զայս մահ արձան  
խորին երախտագիտական

ԱՆՋԱԼԻԿ ԻՄ

Վկայ կ'անգնիմ անձիկս համայն ,  
Ո՞վ ցանկաչիդ իմ սիրական •  
Սևման մեան քարիքն այն ,  
Զոր դու թողեր սառ համական •

Կողքամք զքեզ ո՞վ քարերար ,  
Զի խնցար դու այդպես մար :

Չէր այդ հասակի զան էր մեզ արդ ,  
Տեսնել զքեզ մեզնիկ ունշաւ .  
Թողեր զմ'ազ ունիթիթար ,  
Չէր ընտանիք իսկ եւ զանակ :

Կ'ողբամք զքեզ ո՞վ բարերար ,  
Ձի խշեցար դու այդպէս վաղ :

Աստուածային ահելոյ հրաման ,  
Դռնեց զքեզ 'ի գերեզման .  
Հոգոց Չերոյ մեր Փրկութիսն ,  
Պար է հայցեմք ու սիրտ մաղթեմք :

Կ'ողբամք զքեզ ո՞վ բարերար ,  
Ձի խշեցար դու այդպէս վաղ :

Անմահ Փրկչիկն այն Յիսուսիկն ,  
Կը խնդրեմք մ'աք 'ի փոխարկն .  
Որ վայելիք դուք միշտ այն էն ,  
Յարխանեցից իսկ յարխանն :

Կ'ողբամք զքեզ ո՞վ բարերար ,  
Ձի խշեցար դու այդպէս վաղ :

ԽԱՉԱԿԻՐ ԲԵՌՈՐԴԻՐՍ

ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱՅ

Գ. Յ-Լ-Կ-Դ-Ե

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ազգի ներկայ վիճակ նկատողութեան առ-  
նելով ու ուշի ուշով զննելով, իւր բուն կոչման  
նպատակէն խիստ հեռի ու շեղած տեսնելով՝  
չուզեցի լռել՝ անկարող գտնուելով իմ զգացմանցս  
ընդդիմանալ:

Իմ ազգիս նկատմամբ զգացած ցաւոցս չ'կրնա-  
լով դեզ ու սպեղանի գտնել. դարձնելով տեսու-  
թիւնս համայն Հայոց վերայ ուզեցի տեղեկանալ  
թէ արդեօք ո՞ր Քաղաքներու, Գիւղերու, լաւ  
եւս ըսելով, Նահանգներու Գաւառներու մէջ կան  
ու կը գտնուին ճարտար ու յաջողակ բժիշկներ.  
ա՛յո գասայ խիստ շատեր՝ որոնք լիովին խոստա-  
ցան մեր ցաւոց՝ ցաւակից ու ըստ հարկին դարմա-  
նիչ մեր ներկայ անկեալ վիճակի լինել. Սակայն  
մօտ 'ի մօտոյ քննութեան առնելով Հայ Ազգի վի-  
ճակ չ'կարողացայ յիշեալ անձանց գալստեան ըս-  
պատել՝ երկնչելով թէ գուցէ անադորոյն մահուան  
ճիրանաց գոհ կը լինիմ եւ չեմ կարողանար իմ նպա-  
տակիս ժամանել:

Առ այս փութացի գրիչս ձեռք առնուլ եւ սկսիլ  
այն Հեղինակութեան, գոյզն մի ծառայութիւն մա-  
տուցանելու իմ սիրելի Ազգիս ու համայն Հայու-  
թեան. յուսալով թէ այն Երկասիրութիւնս իւրա-  
քանչիւր ընթերցողաց ուշադրութեան կ'արժա-

նանայ և կ'օգտին նորա լիովին : Սոյն Երկասիրո-  
քիւնս երեք հատորի բաժնելով :

Ա. հատորին մէջ պիտի խօսիմ թէ « Մարդիկ ի՞նչ  
պարտականութիւններ ունին առ Աստուած . և  
զանոնք ի՞նչ եղանակաւ կը սխարտին 'ի դորձ գնել .  
և թէ մարդիկ աշխարհի վերայ ի՞նչպէս պէտք է  
ապրին որ Տիեզերաց Արարչի 'ի սկզբանէ : խոս-  
տացեալ երկնային անանցանելի կենաց ու կատար-  
եալ երջանկութեան ժամանեն : »

Բ. հատորին մէջ պիտի խօսիմ թէ « Մարդիկ  
առ Ընտանիս ու առ Ընկերս ի՞նչ պարտաւորու-  
թիւններ ունին . նոցա հետ ի՞նչ եղանակաւ  
սխարտին կենակցիլ ու կենցաղավարիլ կատարեալ  
մարդ լինելու համար . նոյնպէս Մտղաց ունեցած  
պարտեաց առ Զաւակունս . և Որդւոց առ Մը-  
նողս . և թէ Մտղաց ո՞ր աստիճանի հոգ ու ջանք  
լնել պարտաւորութիւն է ուսման քաղցր նեկ-  
տառն նոցա ճաշակել տալու՝ զանոնք աշխարհի  
փառք ու սրբօճանք և ազդութեան պիտանի , օգ-  
տակար անհասաներ կազմելու մասին : »

Իսկ Գ. հատորին մէջ պիտի խօսիմ թէ՛ « Մար-  
դիկ ի՞նչ պարտականութիւններ ունին առ Ազգս .  
Ազգի մը ո՞րպիտի անձինք կարող են նպաստել ու  
օժանդակ լինել . մարդիկ ի՞նչու համար երկրի  
վերայ կ'ապրին և ի՞նչ պէտք է դորձեն իւր-  
եանց կենաց օրերուն մէջ . և ո՞րպիտի մահուամբ  
պէտք է փոխուին երկրէն յերկինք : »

Քաջածանօթ է ինձ որ սոյնպիտի Երկասիրո-  
քիւններ խիստ շատ կը գտնուին . բայց խիստ ճշշ-



մարիտ է թէ աշխարհի մէջ գտնուող մէն մի ան-  
հատք եւ ժողովուրդք տարրեր տարրեր գաղա-  
փարներ ունին եւ մին միւսին համադատասխան  
չ'խօսիր մի եւ նոյն նիւթի վերայ . առ այս քաջալե-  
րուելով ուզեցի ես ալ իմ կարողութեանս չափ  
սիրելի Հայ Եղբարցս ձանչցունել՝ իւրեանց առ  
Աստուած , առ Ընկերս եւ առ Ազգս ունեցած  
պարտականութիւննին , որով ազատ եղած պիտի  
լինիմ Սրբազան Առաքելոյն այն խօսքէն որ կ'ըսէ ,  
«Վա՛յ է ինձ եթէ ոչ աւետարանեմ» (Ս. Կորնթ.  
Թ. 16:) Սոյն տաժանելի աշխատանացս փոխարէն՝  
ուրիշ բան չեմ ակնկալեր սիրելի ընթերցողներէս ,  
եթէ ո՛չ իւրեանց ուշադրութիւն առ այս յանկու-  
ցանելով փոքր ինչ օգտին՝ եւ լինին կատարեալ  
մաքդ աշխարհի վերայ :

Ակամայ սարդեալ ա , տ . բ , սլ , փ . ե , է .  
ղ , դ , խ . ո , ս , օ . ճ , ց . չ , ջ . և այլն . . . Քերա-  
կանական գոր՝ որ . զորոնք՝ որոնք . սասի՝ սոտ .  
գոր՝ որում . իւրաքանչիւր՝ զիւրաքանչիւր . կա-  
սու՝ կասի . և այլն այլն սխալանաց , ընթերցողաց  
ներողամտութիւնն կը խնդրուի :

Գարեգին Քահուանայ

Գ . ՅՈՎ . ԱԿԻՄԵԱՆ


Ընկալարուս շիրտ' և զ շարժութ : Եւ զգիտութիւն  
արասել ամ շահի ընդէր (Ա.Ռ.Ա.Կ. Ը. 10:)

# ՊԱՐՏԱՆԱԳՈՒԹԻՒՆ

## ԳՂՈՒԽ Ա.




# ՊԱՐՏԻՔ ՄԱՐԴԿԱՆ ԱՌՍԱՏՈՒԱԾ



## ԴԱՍ Ա.




1. — Ի՞նչ են պարտիք : 2. — Գլխաւոր պարտիք քանի՞ են : 3. — Պարտաճանաչութեան օգուտըն ի՞նչ է : 4. — Բարոյապէ՞ս քե նիւրապէս օգտակար է մեզ :



Սիրով վառեալ անշէջ բոցով,  
Սիրով սիրեալ անմեռ հրով.  
Գորով գգուանք անհամեմատ,  
Սէր խանդ եւ սէր անզուգական :

Աւետարան կեանք է կենաց,  
Զնաշխարհիկ մատեան մարդկանց •

### 1. - Ի՞նչ են ՊԱՐՏԻՔ .



1. — Երբ մարդ աշխարհ կը ծնի իւր մօր որովայնէն, և կ'սկսի օր քան զօր աճիլ ու զօրանալ տիօք ու հասակաւ երկրի վերայ, ընդունակութեան ներկայ առարկայներն իրեն սեփհականել ամենագովելի կը թուի. և ո՞վ կրնայ արգիլել,  
Ա.—

նորա գաղափարաց ընդ դէմ գործել, քանի որ  
ինք իւր ներկայութեան կը տեսնէ մէն մի առար-  
կայից դիրք, ձեւ ու գոյն. և որովհետեւ մարդ  
բանական էակ ատեղծուած է տիեզերաց Արարչէն  
և ոչ անբան իրրեւ զանաառն. կը խորհի ներկայ  
առարկայից գործածութեան և նորա արդեանց  
վերայ. և հետզհետէ կ'սկսին նորա ըմբռման կա-  
րողութիւնք զօրանալ ու կարող լինել ամէն տե-  
ւած նիւթերն գաղափարել իւր մտաց մէջ. 'ի վեր-  
ջոյ իւր կարողութեան համաձայն գաղափարած  
բաներուն վրայ կ'սկսի դատողութիւն ընել և ո-  
րոշել ազեղն, գեղեցիկէն, չարն, բարիէն, անպէտն  
օգտակարէն զանազանելով նոցա մէն մի յատկու-  
թիւնքն՝ յայնժամ իրականապէս կ'զգայ մարդ՝ թէ  
ի՞նչ պէտք է գործել և ս'րպիսի եղանակաւ յիշ-  
եալ առարկայից բնութեան հակառակ չի վարուե-  
լու և զանոնք իրեն համայն պիտոյից ծառայեցնե-  
լու և 'ի նոցանէ օգտուելու. այս պահուն երբ ուրիշ  
մի անձ ուզէ իւր գաղափարի համաձայն գործա-  
ծել նոյն առարկայներն՝ իւր բանական էակ լինելն  
զգալով պիտի կ'ասու 'ի գործ ամելէ, քաջ ճանչ-  
նալով՝ թէ իւր իրաւունք ու պարտիք չեն ուրիշի  
գաղափարի խանգարման առիթ լինել ու խանգա-  
րել, երբ այս կ'զգայ՝ յայնժամ կը կատարուի պար-  
տուց ճանաչումն. և չի գործեր մարդկութեան  
հակառակ, այլ կը յարգէ ինչ որ բանական էակի  
մը կը պատկանի զայն 'ի գործ գնել. առ այս կը  
կատարուին պարտաճանաչութիւնք: Զօր օրինակ.

Երբ մարդ իւր ընկերին օգտուելու նպատակաւ  
կ'ուզէ այս ինչ չափ ստակ և կ'ընդունի իւր ակըն-  
դալածն որ և իցէ մի պայմանաժամաւ կրկին իւր  
ընկերոջ վերադարձնելու խոստմամբ, յիշեալ պայ-  
մանաժամն լրանալէն վերջ՝ եթէ չ'ուզէ նոյն գու-  
մարն յետս դարձունել. յայնժամ իւր բանականու-  
թեամբ կ'զգայ՝ թէ ինք իւր պարտիք չի կարաց  
կատարել և պարտուց ու իրաւանց հակառակ դոր-  
ժած եղաւ. մէկ խօսքով երբ մարդ կը խորհի ի-  
րեն նիւթապէս օգնող որ և իցէ անձի փոխա-  
րէն մը հատուցանել՝ նորա բարեաց երախտա-  
պարտ չի գտնուելու մասին՝ սոյն խորհուրդ եւս  
կը լինի պարտանանաչուծիւն, որ ըսել է պարզ  
խօսքով զգացողութիւն :



## ԴԱՍ Բ.

Էից գոյից եւ անգոյից,  
Էից կայից եւ անկայից.  
Բանաւորաց եւ անբանից,  
Շնչաւորաց եւ անշնչից :

Աւետարան կեանք է կենաց,

Չնաշխարհիկ մատեան մարդկանց :

2.- ԳԼԽԱԻՈՐ ՊՍՐՏԻՔ ԲԱՆԻ՞ ԵՆ,

2.- Ընդհանուր պարտիք գլխաւորաբար կը  
բաժնուին երեքի : Առ Աստուած, առ Անձն կամ  
առ Ընկերս եւ առ Ազգս :

Ա. Մարդ երբ իւր աչքի ակնարկ ու տես-  
տութիւն կը դարձունէ ընդհանուր աշխարհի վեր-  
րայ , տիեզերաց անհունութեան ու ընդարձակու-  
թեան , արարածոց ստեղծագործութեան , յայն-  
ժամ պէտք է իւր բոլոր զգացման կարողութիւն  
զոհէ ու նուիրէ՝ սոյն տիեզերաց Արարչի , այն Ա-  
րարչի որ զմարդ չգոյէ 'ի գոյ անձնու և տուած  
է նորա բանականութիւն խորհելու , զգալու և  
գործելու , վասն զի չի կայ աշխարհի վերայ թէ  
չնշաւոր եւ թէ անշունչ էակ մը որ նոյն Արարչի  
հրամանաւ ստեղծուած չըլլայ , այս մասին կը լուեն  
ու կը կարկին համայն բանաւոր էակաց բերան՝  
թէ Քրիստոնէից եւ թէ ոչ Քրիստոնէից . շատ ան-  
հաւատներ , ու աշխարհի մէջ հռչակաւոր եղող  
Փիլիսոփայներ ու գիտուններ՝ թէեւ համարձա-  
կած են ըսել՝ թէ «աշխարհ դիպուածով ստեղ-  
ծուած է » սակայն նոքա իւրեանց մահուան վեր-  
ջին վայրկենին ստակալի աղաղակներով խոստովա-  
նած են՝ թէ «տիեզերք ստեղծող էակ մը կայ» և  
դիպուածի գործ չ'է աշխարհ , սոյն խոստովանու-  
թիւն վաւերական է և ոչ անվաւեր ու անհաւա-  
տալի : Արդարեւ հաւատարիմ ու ճշմարիտ է որ  
համայն մարդիկ իւրեանց կենաց բոլոր օրերն , ժա-  
մերն , վայրկեաններն ու երկվայրկեաններն նուի-  
րեն իւրեանց Արարչի . զի նորա շնորհիւ կ'ապրին  
ու կը շնչեն բոլոր արարածք . առանց նորա հրա-  
մանի ոչ ոք կարող է մի բռնէ ապրիլ այս աշխար-  
հի վերայ . արդ համայն արարածք կը սլարաին

չարունակ իւրեանց նախախնամող Արարչի երկր-  
պագանել, ծուներ կրկնել, խոնարհիլ ու պաղատիլ •  
վասն զի չկայ ուրիշ Աստուած մը տիեզերքի  
վերայ՝ բաց 'ի նոյն Արարչէն և մեք որ նոյն Աստու-  
ծոյն ձեռագործներն եմք պարտիմք մեր շնորհա-  
կալիքներն առ այն նուիրել ու գոհանալ իւրա-  
քանչիւր բարեաց, զոր առատապէս կը բաշխէ՝ մեզ  
առանց խորանաց ու աչառութեան, քանի որ  
մեր կեանք ինքն շնորհած է մեզ, բանական էա-  
կացս կը մնայ ճանչնալ զինքն և մեր բոլոր սրտիւ  
ու զգացմամբ պաշտել զայն՝ թէ տիւ և թէ գի-  
շեր • զի չկայ աշխարհի վերայ ասկից զատ մեզ  
համար էական ու նուիրական պարտիք, քան զայս  
չիք և արդարեւ չիք :

Բ. Մարդ կը պարտաւորի և իւր պարտիքն է  
սիրել իւր անձն ու իւր ընկերն և չի խնայել իւր  
օգնութիւնն առ այն, զգալով թէ ինք բնական օ-  
րինօք կը պարտաւորի իւր ընկերն իւր անձին հա-  
ւասար սիրել, նորա ցաւոց ցաւակից, տրտմու-  
թեան մխիթարիչ, աղքատութեան նիւթապէս  
բարձիչ, տգիտութեան ուսուցիչ, մէկ խօսքով  
մարդ կը պարտաւորի երկրորդաբար օգնել ու  
ձեռնտու լինել իւր նման պատկերակից եղբօր ու  
ընկերոջ :

Գ. Մարդ երրորդաբար կը պարտի ամէն ջանք  
ու զոհողութիւն ընել իւր ազգի • զի ինչպէս մարդ  
առանց մարմնոց անդամոց որ և է մասի թերու-  
թեան անկարող կը գտնուի իւր փափաքներն 'ի

դործ դնել ու կատարել, նոյնպէս առանց ազգա-  
սիրութեան մարդ չէ կատարեալ մարդ, եթէ կ'ու-  
ղէ մարդ կատարեալ լինել ու աշխարհի մէջ իբրև  
մարդ ապրիլ, կը պարտաւորի յիշեալ երեք դըւ-  
խաւոր պարտականութեանց ընդդէմ չի մեղան-  
չել՝ նոյն պարտաւորութեանց եթէ միոյն դէմ մե-  
ղանչէ՝ չեմ սխալիր՝ եթէ ըսեմ սոյն երեք նուի-  
րական պարտաւորութեանց դէմ մեղանչած կը լի-  
նի : Ընթերցողք՝ պէտք է կարդան Ս. Գրոց սոյն  
վկայութիւններն, Վկայութիւնք առ Սատուած ու-  
նեցած պարտաւորութեանց, (Մատթ. ԻԲ. 37) :  
(Եղից. Ի. 2) : (Սաղմ. 26. 8) :

Բ. Առ Ընկերս, (Մատթ. ԻԲ. 39) :

Գ. Առ Ազգս, որովհետեւ ազգ բառով կը  
հասկնամք շատ ժողովուրդներու բազմութիւն իւ-  
րաքանչիւր անձէ ու ընկերէ բազկացեալ, առ այս  
օրինազանց կը դանուխմք՝ եթէ մեր ընկերոջ ու  
մեր ազգի ունեցած պարտականութեանց մէջ  
թերի դանուխմք, և նոյն իսկ մեր Սատուած պաշ-  
տութիւն սուտ ու կեղծիք կը լինի, քանի որ Բ.  
Գ. պարտականութեանց հակառակ կը դործեմք և  
չ'եմք սատուած լինիր Սրբազան Ս. աքելոյն տուած  
սոյն վկայութիւնն : (Ս. Յովն. 4. 20) : և կը լի-  
նիմք պարտազանց :





# ԴԱՍ Գ.

Տարերց չորից եւ աներից ,  
 Տարերց երկուց եւ անմիից .  
 Հողոց ջրոց հրոց օդոց ,  
 'ի մի ձուլից եւ անձուլից :

Աւետարան կեանք է կենաց ,  
 Չնաշխարհիկ մատեան մարդկանց :

## 3. — ՊԱՐՏԱՃԱՆՍԱԶՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏՆ ԻՆՉ Է .


3. — Քանի որ մարդ զգացողութիւն ու բանա-  
 կանութիւն ունի և չէ անբան իբրեւ զհամայն ա-  
 նասունս որք են յերկրի. (Մատթ. Ա. 24) : Եւ իրեն  
 համար տրուած է պատուէր 'ի Տեառնէ ապրիլ  
 իբրեւ մարդ և ոչ իբրեւ անասուն . (Սաղմ. ԽԸ .  
 21) : Կը պարտաւորի շարունակ խորհիլ , մտածել ,  
 իւր կենցաղավարութեան ընթացքներն ուղղել այն  
 ճանապարհին որ դէպ 'իկեանք կ'առաջնորդէ զինքն .  
 (Մատթ. է . 14) : Եւ ոչ անբաններու նման միմի-  
 այն ապրիլ՝ ուտելու և ըմպելու համար . վասն զի  
 մարդուն հոգին Ա. տուածմէ շնչուած է . (Մատթ. Բ .  
 7 . ) : Իսկ անասունին ոգին երկրէն է ու դարձ-  
 եալ երկիր կը դառնայ . (Մատթ. Ա. 24 . ) : (Մատթ. Գ .  
 19) : Չի մարդ ու անասուն խիստ տարբեր  
 բաներ են և ասոնց մէջ անհուն ու անահման  
 տարբերութիւններ կան . ասոնք իւրաքանչիւր ան-  
 հատ կ'զգայ և քաջ գիտէ թէ ինք Ա. տուածմէ  
 մարդ , թէ անասուն ստեղծուած է և որո՞ւ պատ-

կերի նմանութիւն ունի և կամ կը կրէ ինքն •  
(Մենդ. Ա. 27) : Եթէ մարդ այն իւր վսեմ կոչումն  
չի ճանաչէ և չի գործէ իւր կոչման համաձայն  
այս աշխարհի մէջ • յայնժամ ինք իւր բանական ա-  
րարած լինելն կ'ուրանայ և այնմհետէ զայն իբր  
խօսուն , զգայուն , խոհուն և շարժուն էակ չեն  
կոչեր՝ թէև ունի իւր վերայ այն յատկանիչներն ,  
զորս ունին իւր նմաններն ու ընկերներն , զի իւր  
բանականութեամբն կը լինի անբան և նման նո-  
ցա (Սաղմ. ԽԸ. 21) : Սմին հակառակ երբ մարդ  
իւր ուշադրութիւն կը դարձունէ իւր հանապա-  
զօրեայ նուիրական պարտուց այն է ընթերցման  
Ս. Գրոց և կը բանայ ճնաշխարհիկ մատենի այն  
տողերն , զոր կ'ուսուցանեն՝ թէ ինք աշխարհ ան-  
նրապատակ և անպաշտօն չէ ծնած և չէ ստեղծուած  
«եղիցի» բառով • (Մենդ. Ա. 27) : Այլ համայն  
տիեզերաց Արարչի ձեռամբ • (Մենդ. Ա. 27.) •  
Այն Արարչի որուն ներկայութենէն սկսաւ այն ա-  
հագին լեռան Մորենին այրիլ ու չ'սպառիլ • (Ելից •  
Գ. 2.) Եթէ ճանաչէ իւր ո՞ր աստիճանի և ո՞րպի-  
տի կոչման համար այս աշխարհի մէջ ստեղծուիլն ,  
յայնժամ պիտի առնու իւր ձեռք այն յրբազան  
Աւետարանն և պիտի բանայ նորա կենսատու խոստ-  
մանց այն համարներն՝ զորոնք պիտի ճանչցունեն  
իւր այս աշխարհի մէջ իբրեւ եզրայր Տեառն կո-  
չուած լինելուն մեծամեծ խոստումներն • (Հրովմ •  
Ը. 17) և պիտի զգայ թէ ինք այս աշխարհի մէջ  
միշտ կրնայ գործել բարիք ու առաքինութիւն

հետեւելով համայն ճշմարիտ վարդապետութեանց  
Ս. Աւետարանի . եթէ մարդ ճանչնայ իւր պար-  
տիք կը լինի գովելի ու դրուատելի մի անձ , հա-  
մայն մարդկան ներկայութեան կը շրջի նա իրրեւ-  
լոյս . (Մատթ . Ե . 16:) Իսկ եթէ չ'ուզէ իւր պար-  
տիք ճանաչել , նոյն անձ թէ աշխարհի մարդկանց  
առջեւ կը կորսնցունէ իւր յարգ ու սրտիւ , կը  
մեղանչէ բոլոր պարտուց ու իրաւանց դէմ և կ'ապ-  
րի նա աստ աննշան ոք , և թէ իւր Արարչի այն  
դատապարտութեան կ'արժանայ՝ զոր պիտի ար-  
ժանանան համայն իւր նման պատկերակից ու բա-  
նական էակք , երբ իւրեանց կենաց հաշիւն սա-  
հանչուի . նոյն ժամուն պիտի լռեն և անկարող պի-  
տի գտնուին նոյն դատապարտութենէն զերծ մը-  
նալ՝ թէ և ուզեն սլ ինքզինքնին արդարացնել  
փաստեր ու վկայութիւններ գտնել , ու խօսելու  
քակեն իրենց պատանձեալ լեզուն . որոնց պիտի  
կրկնէ այն արդար Գատաւորն իւր այն անդառ-  
նալի վճիռն . զոր համայն պատուիրանազանց և օ-  
րինի ընդդէմ գործող անձանց համար խօսուած է .  
ա՛յո պիտի լսեն այն Աստուածային խօսք որ կ'ը-  
սէ իւր Աւետարանի մէջ . (Մատթ . ԻԵ . 41) : Մէկ  
խօսքով որոնք որ իւրեանց պարտիք կ'զգան և ըստ  
այնմ կը վարուին , նոքա են սիրելի Արարչի և ժա-  
ռանգորդ երկնից արքայութեան . (Մատթ . ԻԵ . 34.)  
վասն զի օրինապահ սւ պատուիրանապահ է այն  
անձ , զոր կը ճանաչէ իւր նուիրական Պարտիք .  
արդարեւ գովելի է այն անձ , զի կը լինի նա իւր

կոչման համապատասխանող . և ազատ կը լինի թէ  
աշխարհի բանտէ և թէ երկնից անվերջանալի տան-  
ջանքներէ . (Մատթ . ԻԵ . 46) :

Քանի որ ճանչցանք թէ մեք աննպատակ և ան-  
կոչում չեմք կը պարտաւորիմք մեր կոչման համա-  
ճայն վարուիլ ու դործել և միշտ մեր առջին ու-  
նենալով Տիրոջ պատուերներն՝ զորոնք զմեզ կ'ա-  
ռաջնորդեն՝ իբրև լոյս այս աշխարհի խաւարչտին  
ու մարտիւղապատ վայրերէն . (Մատթ . ԺԸ . 9) . Ա՛յո  
ընտրեմք նոքա մեր առաջնորդ որ չը կորսուիմք :



## ԴԱՍ Դ

Արարածոց համայն սեռից ,  
Արարածոց ողջոյն դասուց .  
Արուաց իգաց եւ անիգաց ,  
Ուստերց դստերց եւ անուստերց :

Աւետարան կեանք է կենաց ,  
Ընաշխարհիկ մատեան մարդկանց :

4 .- ԲԱՐՈՅԱՊԷ՞Ս ԹԷ՛ ՆԻԻԹԱՊԷ՛Ս ՕԳ՝ՏԱԿԱՐ Է՛ ՄԵՉ .

4 .- Երբ կ'զգամք թէ այս աշխարհի վերայ ու-  
նիմք շատ մը պարտաւորութիւններ , թէ կը օնա-  
կան և թէ աշխարհական յայտնի մի ճշմարտու-  
թիւն է սր մեք այս մեր ապրած վայրէն սկիտի

անցունեմք մեր բոլոր փափաքներուն ծարաւն և  
աստի պիտի վայելեմք ամէն ինչ որ Աստուած սահ-  
մանած է մեզ. (Մկնդ. Ա. 29-30). սոյն բարիքներն  
անխտրաբար վայելելու արտօնութիւն ունիմք և  
ազատ եմք դանոնք մեր պիտոյից համաձայն ու  
կամաց ուտել ու բնակել, ուրախանալ և զուարճա-  
նալ, տնկել ու շինել, սակայն ասոնց բոլորն ալ  
միմիայն մի ինքնագոյ էակի մը ձեռօք կը լինի .  
(Ժողով. Գ. 13). և մեր պարտաւորութիւնն է սոյն  
ամէն բարիք վայելած ժամանակ զգալ որ մեք մի  
պարտաւորութիւն ունիմք և այն մեզ խիստ պի-  
տանի է և կը պարտաւորիմք նոյնին համաձայն  
կենցաղավարիչ ու գործել, այն է յաջ ու յահեակ  
չի խոտորիլ Աստուածային մեզ աւանդած պա-  
տուերներէն. և եթէ ուզեմք մեր ամէն փափաք-  
ներն ու իղձերն լիովին կատարել ու վայելել ամէն  
բարիք ինչ որ երկիր յառաջ կը բերէ ու կը բուս-  
ցընէ, այս պահուն չի յիշեմք և չի նուիրեմք մեր  
բոլոր խորհրդածութիւնք առ այն որ մեզ պա-  
տուիրած է մեր Արարիչն իւր արարչագործու-  
թեան ժամանակ. (Մկնդ. Բ. 16-17). վասն զի երբ  
մեր նախածնողն Ադամ ստեղծեց Աստուած գի-  
տեմք որ զայն Եդեմական Գրախոն դրաւ և պա-  
տուիրեց որ հոն գտնուող բոլոր ծառերուն պը-  
տուղներէն ուտէ համարձակ, սակայն մի պատուեր  
տուաւ նոյն նախաստեղծին և պատուիրեց անհը-  
նազանդ չի գտնուիլ յիշեալ օրինաց և եթէ չուզէ  
անսալ ու կատարել իւր Արարչի պատուեր. յայն-

Ժամ պիտի կորսնցունէ իւր անմահութիւնն և պիտի լինի մահկանացու . սոյն պատուէր ուրիշ բան չէր՝ եթէ ոչ ճանչնալ իւր Արարիչն և նորա հրամանի անսալով պատուիրանագանց չի գտնուիլ . սակայն տես որ մարդ ո՞րչափ ապերախտ է և ո՞ր աստիճանի յանդուգն որ կը համարձակի իւր Արարիչն չի ճանաչել և նորա պատուէրն ոտնակոխ ընել բուական համարելով որ իւր կամաց հաճոյքն կատարուեցան . և թէ կորսնցուց այնպիսի հազուագիւտ ու ճնաշխարհիկ կեանք մը , որ այլ ևս ստանալ անհնարին է , երբ յանդգնեցաւ սոյնպիսի մի ձեռնարկութիւն ընել՝ յայնժամ զրկուեցաւ այն աննման Գրախտէն որ յաւիտեան պինք երջանկացնելու համար ստացաւ . (Մենդ . Գ . 22) . Ահարդեօք ո՞վ կրնայ պատմել նորա կորստեան և աքտորման զգացած ցաւն , եթէ համայն արարածք ՚ի մի վայր խմբուին և ՚ի մի ժողովին՝ չեն , ա՛յո չեն կարող բացատրել և արդեօք ո՞ր գրիչ կրնայ պատմել սոյն աղետալի կորստեան վերայ ու թարգման կանգնելով բացատրել՝ թէ այս աստիճան է նորա զգացած ցաւն , և որ՞պիսի թիւ կրնայ գտնուիլ ասպացուցանելու համար թէ այսչափի կը յանդի իւր կորստեան ցաւոց աստիճանն . ա՛յո չիկայ աշխարհի մէջ մի արարած որ կարողանայ նախատեղծի զգացած արտմութեան ու ցաւոց մխիթարիչ , սխտիիչ . դեղ ու դարման լինիչ . ո՞յր պատճառաւ սոյն տաժանելի աշխատութեանց ենթարկուեցան Ադամ և համայն իւր սերունդք . ո՛չ ա-

պաքէն իւր պատուիրանազանցութենէն ու պա-  
տուիրանի և պարտուց ճանաչման հակառակ դոր-  
ծելէն. (Մանգ. Գ. 19): Մի անգամ աչքերնուս առ-  
ջեւ ներկայացուենք սոյն անդարմանելի կորուս-  
տըն և ձեռքերնիս ծնօտնուս դնելով պահ մը խո-  
րին խորհրդով ու ուշի ուշով սկսիմք մեր մտա-  
ծութեան առարկայն առ այն միայն յանկուցանել ք  
Կարծեմ ուրիշ բան չի պիտի գտնեմք միմիայն  
մարդուն անսանձ ու սպերախտութեան վարժ և  
հետամուտ լինելու ունեցած մի յատկութիւնն ք  
Սոյնպէս մարդիկ աշխարհի մէջ եթէ ուզեն իւր-  
եանց դադարաւարաց համաձայն ամէն ինչ վայելել  
ու սպրից առանց յիշելու, թէ իրենք թէ և ունին  
աղատութիւն ու համարձակութիւն աշխարհի բո-  
լոր բարիքներն վայելելու արտօնութիւն անխա-  
րարար. (Մանգ. Ա. 29-30) ք նոցա պտուղներն ճա-  
շակելու և իշխելու բոլոր երկրի անասնոց, թռչնոց  
և համայն «եղիցի» բաւով ստեղծուած արարա-  
ծոց. (Մանգ. Ա. 26-29) ք Սոքա կը պարտին մի Ա-  
րարչի հնազանդիլ և նորա պատուիրանաց կատա-  
րիչ լինել. (Մանգ. Բ. 16-18) ք Եւ թէ նախահայրն Ադամ  
իւր պարտանանաչութեան օրինաց հակառակ վա-  
րուելովն Դրախտէն աքսորուելովն. (Մանգ. Գ. 24)  
ինքն ու իւր համայն զաւակունք ենթակաց եղան  
նոյն պատուիրազանցութեան (Հոովմ. Ե. 17) ք և  
նոյն օրինազանցութեան պատիժէն ոչ ոք կարող  
եղաւ մարդկային ազգն փրկել, ազատել ու օրի-  
նապահ կացուցանել եղծանելով նոյն Աստուածա-

յին վճիռ . թէև Աստուած խրկեց իւր ժողովուրդն  
անխնամ , լքեալ և անօգնական չի թողելու հա-  
մար Նահապետներ . Արբահամ , Իսահակ . Յակոբ ,  
Բաց 'ի սոցանէ Մարգարէներ . որք են Մովսէս , Ե-  
սայի , Երեմիայ , Եղիսէ , Զաքարիայ , Գանիէլ և  
այլն . . . սակայն ոչ ոք կարողացաւ մարդկային  
ազգն իրկել ու ազատել Ադամային պատիժէն  
միմիայն մի Անճ դանուեցաւ որ կարող եղաւ իւր  
կեանք զոհելով Խաչի վերայ ազատել ու իրկել  
սոյն անկեալ վիճակէն զմարդ . ա՛յո Քրիստոս  
էր նոյն Փրկիչն որ զմեզ իրկեց իւր արիւնովն .  
(Հոովմ . Ե . 9) : Յիսուսի Քրիստոսի միմիայն ար-  
եամբ իրկուելնուս և նախատեղծին պատիժէն  
ազատ մնալնուս համար . Խիստ շատ վկայութիւն-  
ներ կան նոր ու հին Կտակարանաց մէջ որոնց բոլորն  
աստ յիշել աւելորդ համարեցի . Մեք որ իրկեալ  
ժողովուրդք եմք (Եփե . Բ . 5) և կ'ապրիմք շնոր-  
հաց օրէնքի տակ . (Հոովմ . Զ . 14) նոյն Յիսուսի  
միջոցով և եթէ մեք եւս մեղանչեմք և օրինա-  
զանց դանուիմք ու չի ճանչնամք մեր պարտք ու  
պարտիք , զոր իբր մարդ կը պարտաւորիմք հնա-  
զանդիլ օրինաց չի նմանելով մեր Նախածնողի ,  
յարգել պարտաճանաչուեմիւն՝ զգալ՝ թէ մեր  
նուիրական պարտիք միմիայն աշխարհի մէջ բարի  
ապրիլն է . վասն զի մեք մահկանացուքս այն աս-  
տիճան պատուուած ու ստեղծագործուած եմք՝  
զոր մարդ ինքնին կ'ապշի և կը հիանայ երբ կը  
կարդայ (Սաղմ . Ը . 7) , Եւ չեմ սխալիր եթէ ըսեմ



Հրեշտակներէն ալ աւելի խնամտուն (Ղուկ . Ժ. 2 . 8:)  
Եթէ բոլոր մեզ շնորհուած շնորհներն ոտնակոխ ք-  
նելով դորձեմք ինչ որ աշխարհային կամք կ'ուզէ  
ու կը հաճի՝ յայնժամ մեք եւս պիտի արտաքսու-  
ինք այն Գրախտէն զոր Յիսուս Աստուծոյ սիրելի  
որդին (Մատթ . Գ . 17) խոստացած է արտաքսել  
բոլոր օրինազանցներն . (Մատթ . ԻԵ . 41) : Ըսել է  
պարտաճանաչութեան ու պատուիրանապահու-  
թեան բարոյապէս օգուտն զմարդ երկրէն , երկինք ,  
մահէն , կեանքի , ասպականութենէ , անասականու-  
թեան կը փոխէ ու ժառանգորդ կ'ընէ այն եր-  
ջանկութեան ու անվախճան փառաց , զոր պատ-  
րաստուած է համայն ընտրելոց ու արժանեաց .  
(Մատթ . ԻԵ . 34) : Գործեալ պարտաճանաչութիւն  
օգտակար է նիւթապէս՝ ով որ աշխարհի մէջ իւր  
պարտիք կը ճանաչէ և ինչ որ մարդկութեան  
ընել կը վայլէ՝ զայն 'ի դորձ կը դնէ , նոյն անձ  
եւս աշխարհի մէջ կ'ապրի իւր Աստուծոյն մի ընտ-  
րեալ արարածն և կը տիրէ երկրի համայն շնչա-  
ւոր և անչունչ , անասնոց զեռնոց և տարերաց  
(Օճնդ . Ա . 26:) եւ ճիշտ այս իշխանութիւնն տրուե-  
ցաւ 'ի սկզբանէ մեր նախաստեղծին և ճշմարտա-  
պէս գիտեմք որ նա եթէ օրինաց դէմ չի մեղան-  
չէր մարդ աշխատութեան չէր դատապարտուէր ,  
իւր և համայն իւր սիրեալ սերնդոց չէր տրուէր  
սոյն անդառնալի վճիռն (Օճնդ . Գ . 19 :) Արդ խիստ  
ճշմարիտ է թէ մարդ կ'ուզէ որ աշխարհի մէջ հա-  
րուստ ու փառաւոր վիճակ մը ունենայ և իւր

գործերն յաջող վիճակի մէջ գտնուին շարունակ և  
ինքն լինի ճիշտ մարդ բառին ստուգարանութեամբ:  
Տէր ու Իշխան աշխարհի ու թագաւորէ բոլոր երկ-  
րի ժողովրդոց որ ինք նոցա բոլորովին անձանօթէ,  
և պատուաւոր համայն նոյն քաղաքի ժողովուրդ-  
ներէն, ա՛յո պատուիրանապահութիւն նիւթապէս  
զմարդ բարձր աստիճանի կը բարձրացունէ (ա) ըս-  
տորնութենէ, աւագութիւն, մերկութենէ ու քա-  
րայրի մէջէ ծառայութիւն, ծառայութենէ տնտե-  
սութիւն, և տնտեսութենէ ու բանտէ թագաւո-  
րութիւն. երեւակայեցէք մի անգամ թէ ո՞վ ու  
ո՞րպիսի ոք էր գեղեցիկն Յովսէփի և բացէք Ս.  
Գրոց (Մենդ Լէ. գրոյթեկն միւնչ Մ. գրոյթ) նոյն գը-  
լուխներուն մէջ պիտի գտնէք նախապէս Յովսէփի  
կրած դրկանքներն ու քաշած չարչարանքներն իւր  
եղբարց ձեռամբ և ՚ի վերջոյ այնպիսի բարձր պաշ-  
տօնի մը կարգուիլն. երբ մարդ սոյն համարներն  
կ'ընթեռնու ուշի ուշով, արդարեւ պիտի զարմա-  
նայ ու հիանայ սոյն պատմութենէն և պիտի գո-  
չէ այն Աստուածահայր կոչուած Մարգարէին խօս-  
քըն որ կ'ըսէ «ո՛րպէս զի մեծ են գործ քո տէր,  
և յոյժ խոր են խորհուրդք քո:» (Սաղմ. ԴԱ. 5:)  
Արդեօք ո՞վ կրնար երազել թէ այն աստիճանի  
լքեալ, անօգնական և անոք մէկ մը նոյնպիսի իա-  
ռաց կ'արժանանայ և կը լինի Տէր ու Իշխան Ե-  
գիպտոսի և երկրորդ արքայ՝ մեծին Փարաւոնի,  
(Մենդ. ԽԱ. 40-45) արքային Եգիպտացւոց. ինչ տե-  
սակ անձ էր Յովսէփ որ իւր այնպիսի աննշան

վիճակէն բարձրացաւ մինչ յգահ թագաւորական  
ո՞չ ապաքէն իւր Արարչի պատուիրանաց հնազան-  
դութիւն ընելով և մտածելով թէ Աստուած միշտ  
կը սիրէ այն անձերն, որոնք եթէ հարկ լինի իւր-  
եանց կեանք կը զոհեն և կը մատնեն 'ի բանա, և  
իւրեանց արիւն չեն խնայեր, աւելի լաւ կ'ընտ-  
րեն օրինապահ լինիլ քան Պատուիրանազանց, Սոյ-  
նէն քաջալերեալ ինքն Յովսէփ աւելի լաւ ընտրեց  
իւր համար բանտ ու մահ քան անաւ այն կնոջ,  
զոր ինքն կը հրաւիրէր 'ի Պատուիրանազանցու-  
թիւն. (Մենդ. ԼԹ. 12): Այսպէս եթէ մեք կը  
փափաքիմք նիւթապէս օգտիլ, հարստանալ, պա-  
տուաւոր լինիլ յ'աջս համայն անձանց, և լինիլ մեծ  
քան զամենայն մարդիկ պատուով, պարտէ միշտ  
մեզ հնազանդ լինիլ օրինաց. զի օրինազանցութիւն  
զմարդ կը մատնէ 'ի կործանումն, 'ի հուր և 'ի դա-  
տապարտութիւն յաւիտենական (Մենդ. ԺԹ. 24-  
25). Իսկ ապաշխարողներն և օրինաց հնազանդիլ  
ուզողներն 'ի բոլոր սրտէ Աստուածային կործա-  
նելու վճիռն յետս կը դարձունեն և փոխանակ  
կորսուելու՝ երկրէն բոլորովին բնաջինջ լինելու,  
կ'արժանանան Աստուածային ներման ու առատ  
գթութեան. (Յովն. Գ. 10.) Նոյն իսկ Մարգա-  
րէն իւր ոսկեքնարով երգած երգին մէջ զարմա-  
նալով և իւր բազմաժամանակեայ ունեցած փոր-  
ձառութեամբ Տիրոջ ընտրեալներուն և Աստուա-  
ծահաճոյ կեանք անցունող անձանց լքեալ, չուառ  
չ' կրնար տեսնելովս կը վկայէ (Սաղմ. ԼԶ. 23.) Եւ

դարձեալ աշխարհաճաշակ խնամուուն Սողոմոն  
իւր Առակաց մէջ կը գրէ սոյն վսեմ ճշմարտու-  
թիւնն . «Որդիակ՝ զօրէնս իմ մի՛ մոռանար : Եւ  
գրանս իմ պահեցէ սիրտ քո : Ձի ընդ երկարու-  
թիւն կենաց : Եւ ամք կենդանութեան . և խաղա-  
ղութիւն յաւելցին քեզ :» (Առակ. Գ . 1-2) Աւե-  
լորդ կը համարիմ այս մասին այլ եւս գրել . վասն  
զի Ս . Գրոյ գրեթէ բոլոր համարներն կը պա-  
տուիրեն բոլոր բանական արարածոց լինիլ օրի-  
նապահ ու պատուիրանապահ համայն օրինաց հնա-  
զանդ լինիլ ու զող անձանց կը խոստանան բարո-  
յապէս փառք , երջանկութիւն և անգրաւ կեանք  
'ի հանդերձելումն . իսկ նիւթապէս . հարստու-  
թիւն , յաջողութիւն , փառք , պատիւ , երկարու-  
թիւն կենաց . . Մէկ խօսքով եթէ կ'ուզեմք թէ  
բարոյապէս և թէ նիւթապէս երջանկանալ աստ և  
'ի հանդերձելումն , պէտք է միշտ Ս . Գիրքն մեր  
ձեռքն առնելով կարդամք նորա փրկարար էջերն  
ու սողերն և մեր ուշադրութիւնն առ այն նուի-  
րեմք , զի օրինապահութիւն օրինաց ուշ դնելով  
կը լինի . ասոր համար Առաքեալն մեզ կը պա-  
տուիրէ ուշադիր լինիլ Աստուածային օրինաց ը-  
սելով «Ապա ուրեմն հաւատք 'ի լսելոյ են՝ և լուր  
'ի բանէն Քրիստոսի :» (Հռովմ . Ժ . 17) Առանց լը-  
սելու ո՛չ ոք կարող է պահել և լսի լսողներն եւս  
չեն արդարանար ըստ վիպութեան Սրբազան Ա-  
ռաքելոյն : «Ձի ոչ եթէ որք լսողք օրինացն են  
արդարացեալք են տուալի Աստուծոյ . այլ առնողք

օրինացն արդարացին :» (Հովիվ. Բ. 13) : Ըսել է  
օրինապահ լինելու համար պէտք է նախապէս Աստուծոյ խօսքն Մ. Գրքէն և երկրորդաբար ամէն  
ջանք ՚ի գործ դնել զայն կատարելու . որով յայն-  
ժամ կը լինիմք Արարչի օրինաց լսողք ու կատա-  
րողք և կը նմանիմք մեք այն անձին որ իւր տուն  
«վիմի վրայ շինեց» Քրիստոս Աստուծոյ խօսքերն  
լսող ու կատարող անձինք կը նմանցունէ սոյն օ-  
րինակաւն : «Ամենայն որ լսէ զբանս իմ զայստսիկ՝  
և առնէ զտտա՝ նմանեացի առն խմաստնոյ . որ շին-  
եաց զտուն իւր ՚ի վերայ վիմի : Ի՞նչն անձերեւք  
և խաղացին դեռք՝ շնչեցին հողմք՝ և բախեցին  
զտունն՝ և ոչ կործանեցաւ՝ քանզի ՚ի վերայ վիմի  
հաստատեալ էր :» (Մատթ. Է. 24-25) Թէեւ չեմք  
կրնար ըսել թէ որոնք որ այս աշխարհի մէջ բա-  
րի , արդար են ու պատուիրանապահ նորա աշ-  
խարհի մէջ չեն կրեր նեղութիւն և կը լինին շա-  
րունակ հարուստ . վասն զի Ղազարոս թէեւ օ-  
րինապահ , սակայն նորա աշխարհի կեանք էր  
թշուառութիւն , խեղճութիւն , ողբ և լաց (Ղովի-  
վ. Ժ. 20-21) : Նոյնպէս ամէն ամբարշտի կեանք  
աղքատութիւն ու ապերժանկութիւն . (Մատթ. ԶԲ .  
12) Գարձեալ Սողոմոն խիստ լաւ կերպով կ'ա-  
պացուցանէ մեզ թէ մեք լաւ համոզուելու եմք որ  
ամէն շար իւր պատիժն պիտի կրէ . եթէ պատահի  
որ երբեմն աշխարհի մէջ յաջողութիւն եւս ունե-  
նայ իւր սոյն վկայութեամբ : «Որ մեղաւ , ա-  
րար դշար . յայամհեալ՝ և ի վաղուց ժամանակաց :

Քանդի գիտեմ և ես՝ գինչ է բարին երկազածաց  
Սատուծոյ : Չի երկիցեն յերեսաց նորա : (Ժող. Ը .  
12) : Ուրեմն կը պարտաւորիմք մեք միշտ բարի  
ապրիլ, որ բարի մահուամբ եւս մեռնիմք, և թո-  
ղումք աշխարհ իւր բոլոր սին ու սնտաի փառքե-  
րումն հանդերձ, բարիք դորձեմք, ա՛յո բարիք :



## ՊԵՆՏԵԿՈՆ



ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԱՃԱՆՍՁՈՒԹԵԱՆ

## ԴԱՍ Ա.



1. — Ո՞ր աստիճանի անձանց կը պատկանի պարտաճանաչութիւն : 2. — Մարդս իւր ս՞ր ժամանակէն պէտք է սկսի : 3. — Ի՞նչ եղանակաւ պէտք է ՚ի գործ դնէ : 4. — Եւ որո՞նք միջոցով պէտք է ուսանի :



Ստեղծեալ ձեռօք Անարատի ,  
 Ստեղծեալ մատամբ Անմահի .  
 Փրկեալ արեամբ Խաչեալ Փրկչի ,  
 Գնեալ արեամբ զոհեալ Գառի :

Աւետարան անգին Մատեան ,  
 Չքնաղ կտակ այն Յիսուսեան :

1. — Ո՞Ր ԱՍՏԻՃԱՆԻ ԱՆՁՆԵՑ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ  
 ՊԱՐՏԱՃԱՆՍՁՈՒԹԻՒՆ .

1. — Թրէնք քանի որ ընդհանրութեան կը վերաբերի . ըսել է ընդհանուր աստիճանի՝ Պատուաւոր և Անպատիւ , Հարուստ ու Սղքատ , Վա-

Ճառական և Արհեստաւոր • Տէր և Ծառայ • Այր  
և Կին • Ուսար և Դուսար • Ծեր և Երիտասարդ •  
Պատանի և Մանուկ կը պարտաւորին ճանաչել իւր-  
եանց Պարտիք և չեն աղատ պարտանանաչուծենէ •  
վասն զի չ'կայ Աստուածային մի օրէնք որ հրա-  
մայէ սյս ինչ և այն ինչ աստիճանի անձանց պա-  
տուիրանապահ լինիլ և ոմանց պատուիրանազանց •  
այլ կը յորդորէ և կը խրատէ համայն բանական  
էակ վնել օրինաց հպատակ և ճանաչել զուսումն  
Աստուած դիտութեան : Առ սյս Յիսուս Աստուծոյ  
որդին մինչ չէր համբարձած Չիթենեաց լեռնէն  
իւր մետասան աշակերտներուն կը պատուիրէ « Եր-  
թալ աշակերտել բոլոր հեթանոսներն ու մկրտել  
զանոնք Հօր , Որդւոյ և Ս . Հոգւոյ անունովը և  
սորվեցնել անոնց ինչ որ ինք պատուիրեց : » (Մատթ .  
ԻԸ . 19-20 .) Եթէ պատուիրանապահ լինել աստի-  
ճանի , հասակի և անձի լինէր՝ անշուշտ պէտք էր  
որոշել . եւ քանի որ մեք չ'եմք կարդար Ս . Գրոց  
Հին և Նոր Կտակարանի մէջ թէ օրէնք առ սյս  
և առ այն կը վերաբերի . ճշգրտապէս դիտեմք  
որ պարտանանաչուծ իւն համայն անձանց կը վե-  
րաբերի . և եթէ մեք արդարանալու նպատակաւ  
սխալ փաստերով ուղեմք զմեզ դատապարտու-  
թենէ աղատ պահելու համար ըսել թէ մեզ համար  
չէ , յայնժամ Աստուծոյ դատապարտութեան վրճ-  
ւոյն պիտի ենթարկուիմք մեք՝ և թէ բոլոր մեզ  
նման կարծիք ունեցող անձինք (Ստղոս . ԽԹ . 16-  
22 :) Արդ ստուգիւ քաջ ճանչնալով մեր պարտա-



կանութիւնն և լաւ համոզուելով թէ բոլորիս է օրինապատէ ու պատուիրանապատէ լինելու պատուէրն այն Յիսուսին, զոր մեզ համար ինքն հաճեցաւ իւր Աստուածային հզօր բազուկներն կարկառել այն Պաշին վերայ՝ որ իւր Աստուածային ձեռօք ստեղծագործեալ արարածք պատրաստած էին. յիշելով մեր պարտիք առանց ժամանակ կորսնցնելու գործեմք ինչ որ պարտաճանաչուածեան կ'օգնէ; ու կը նպաստէ :

## ԴԱՍ Բ.

Համայն հովուաց Հովապետաց,  
Ողջոյն դասուց Հայրապետաց,  
Քահանայից մեծաց Պետաց,  
Սարկաւագաց ողջոյն Դպրաց :

Աւետարան անգին Մատեան,  
Զքնաղ կտակ այն Յիսուսեան :


2.- ՄԱՐԴԱ ԻԻՐ ԽՐԻՍՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԷՆ ՊԷՏԻ Է ՍԿՍԻ

2.- Մարդս ընդհանրապէս ունի մի քանի սասիճաններ. այսինքն Մանկութիւն, Պատանեկութիւն, Երիտասարդութիւն և Մերութիւն. ոմանք աւելի յարմար կը դատեն Աստուածաշարժութեան սկսելու ժամանակն Մերութեան օրերէն, ոմանք Երիտասարդութեան. ոմանք Պատանե-

կութեան . իսկ ունաք Մանկութեան . պէտք է  
քննութեան առնելով պահ մը խորհիւսք և այս մա-  
սին թղթատեւք Ս . Գրոց համարներն և համո-  
զուիւսք թէ աւելի յարմարագոյնն և Արարչի հա-  
ճելի եղածն որն է . առ այն դարձունելով մեր  
մտաց կարողութիւններն հետեւիւսք ինչ որ Աս-  
տուածային , օրէնք կը տրամադրեն մեզ ըստ Ս .  
Գրոց վկայութեան աւելի պատշաճագոյն ժամանա-  
կըն է «Մանկութիւն» Արուն համար աւելի բացա-  
յայտ կերպով կը խօսի Սողոմոն սոյն համարներո-  
վըն «Եւ յիշեա զԱրարիչն քո՝ յաւուր մանկու-  
թեան քո : մինչև հասեալ իցեն առուրք շարու-  
թեան : Եւ ժամանեցեն ամք՝ յորս ասացես , թէ  
ո՛չ են կամք իմ ՚ի դոսա» (Ժողով. ԺԲ . 13) Եւ ար-  
դարեւ ճշմարիտ է սոյն վկայութիւն . Ե՞վ է աշ-  
խարհի մէջ խմաստուն ու գիտուն անձ , որ կա-  
րող լինի ըսել և դուշակել թէ ինք իւր կենաց  
այս ինչ և այն ինչ օրերն լրացնելով պիտի փոխուի  
երկրէն յ'երկինք . մինչ ցարդ որ այսչափ տարիներ  
հոլոված են , ո՛չ ոք կարողացած է սոյնպիսի որո-  
շում մը տալ և նոյն ինքն երկնաւոր Վարդապետն  
Յիսուս չ'ուզեց վերջին դատաստանի օրն որոշել .  
չէ թէ չէր գիտէր , քա՛ւ լիցի , այլ չ'ուզեց յայտ-  
նել . վասն զի եթէ չէր գիտէր ըսեմք , յայնժամ  
Աստուածային Անձանց մի կամք ունենալն ուրա-  
ցած կը լինիւսք և կ'ըլլայիւսք Հերեմիկոս . և քանի  
որ ո՛չ ոք գիտէ իւր կենաց վերջին օրն . ըսել է  
մարդ բարին չարէն որոշելու կարողութիւն ըս-

տացած օրէն , որ դարձեալ Մանկութենէն ըսել է . մեք որ ամէն զգացողութեամբ կատարեալ եմք և ամէն ինչ որ սահմանուած է , զայն 'ի պէտս մեր գործածել լաւ գիտեմք . պէտք է գիտնամք որ Աստուած չէ ուզած յայտնել մարդոց կենաց թիւն , թէ այս ինչ անձ այսչափ տարի պիտի ապրի . հաւանական է թէ մարդիկ միշտ պատրաստ գտնուելու նախատակաւ չէ յայտնած . Յիսուս որ դատաստանի օրն չ'ուզեց յայտնել մարդկանց . (Մատթ . ԻԴ . 36 .) Նոյնպէս կը պատուիրէ մեզ միշտ արթուն կենալ մեր կենաց վերջին օրն մեզ անյայտ լինելուն առթիւ (Մարկ . ԺԳ . 35-37 .) և չէ միայն այս՝ այլև բոլոր աշխարհի արարածք անկարող են իւրեանց մի վայրկեան և կամ մի երկվայրկեան սպրեւուն երաշխաւորել մեզ . և առ այս յիշելով Առաքելոյն այն խօսք (Գաղ . Զ . 10) . առանց սպասելու և առանց ժամանակ կորսնցնելու սկսիմք օրինապահութեան և պարտահանաչութեան , քանի որ տակաւին կ'ապրիմք և Աստուծոյ հոգին մեր մէջ կը թաղաւորէ . եթէ ըստ ումանց կարծեաց ունեցած ժամանակնուս մէջ չ'ուզեմք գործել և որ և է սնտոյ պատճառներով կորսնցունեմք պատեհառիթ ժամանակնիս . նոյն ստեն երկնաւոր Փեասն գալով պիտի մտնէ իւր յաւիտենական հանգիստն և մեք երկնաւոր Հարսանիքէն դուրս պիտի մնամք «Յիմար Կոյսերուն նման» . և թէեւ պիտի դռչեմք լալագին դիմօք , ազիտողորմ հառաչանօք «Տէր Տէր բաց մեզ» . Սակայն

նոյն Փեշայն 'ի ներքուստ պիտի պատասխանէ մեզ  
ինչպէս Յիսմար Կոյսերուն «Նա պատասխանի ետ և  
ասէ • ամեն ասեմ ձեզ՝ թէ, ո՛չ գիտեմ զձեզ (Մատթ .  
ԻԵ . 12 :) Այո խիստ թշուառ պիտի լինի յայնժամ  
մեր վիճակ և պիտի կորսնցունեմք այնպիսի հա-  
զուագիւտ ու անգտանելի մի փառք , որոյ նման  
չիք և արդարեւ չիք յ'աշխարհի , Սրբազան Առաք-  
եալն նոյն փառաց չ'ի կրնալով որև է կերպով բա-  
ցայայտ մի պատասխան տալ և շուարելով իւր ու-  
նեցած այնչափ գիտութեամբ որոչ մի ստորագելի  
յատկացունել . սոյն հակիրճ երկու խօսքով կը բա-  
ցայայտէ • նոյն փառաց ո՞ր աստիճանի աննման  
լինելն «Այլ որպէս և գրեալ է •» զոր ակն ոչ ե-  
տես • և ունին ոչ լուսւ . և 'ի սիրտ մարդոյ ոչ ան-  
կաւ • զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւ-  
րոց» (Ա . Կորնթ . Բ . 9 :) Ե՛ն ուրեմն գործեմք  
չ'սպասելով յարմար ժամանակի . այլ ներկայն չ'կոր-  
սընցնելով գործեմք ասպագային համար • ա՛յո  
գործեմք միշտ :



## ԴԱՍ Գ.

Թագաւորաց Թագակրաց ,  
Թագուհեաց եւ Թագադրաց .  
Գահակալաց Գահաբազմից  
Արքայականաց Արքայից :

Աւետարան անգին Մատեան ,  
Չքնաղ կտակ այն Յիսուսեան :

Ի՞նչ է ԴԱՆԱԿԱԻ ՊԷՏԻ Է Ի ԳՈՐԾ ԴՆԷ .

3 .- Աստուածային պատուիրանաց պահպանութեան եղանակն մեք ուրիշ միջոցով չ'եմք կրնար 'ի գործ դնել . այլ միակայն մեր Փրկչի մեզ աւանդած փրկաւէտ Աւետարանի միջոցով . մեք խարուսիկ , աշխարհի փառաց ու պատուոյ արժանի անձանց վարուց ու գործոց կամ նոցա Տրամաբանական խորհրդով , ճարտասանական ընտիր ձեւերով ու ճոխ բառերով խօսուած ու պատուիրուած աւանդութեանց բնաւ հետեւելու չ'ենք . այլ նոյն անձանց պատուիրած որեւէ պատուիրանաց անսալ կը պարտխմք ըստ Աւետարանի : « Յաժողուն Մովսէսի նստան Դպիրքն և Փարիսեցիք : Չամենայն ինչ՝ զոր ասիցեն ձեզ՝ արարէք , և պահիցէք : Բայց ըստ գործոցն նոցա մի առնէք : Ձի առնն և ո՛չ առնեն (Մատթ . ԻԳ . 2-3 : ) Բայց նոցա աշխարհի վերայ անցուցած կենցաղավարութեան օրինա-

կին հետեւելու չ'եմք . և այս եւս մի ճշմարտութիւն է՝ թէ մարդ անմեղ . և անսխալ չի կրնար լինիլ և մեք մեր Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ բոլոր պաշտօնեայք չ'եմք կրնար անմեղ ու անսխալ ընդունիլ ըստ Աւետարանի «չիք ոք բարի , բայց մի Աստուած» (Ղուկ . ԺԷ . 19)։ Միմիայն կը պարտաւորիմք մեք՝ մեր Յիսուսին «նայիլ» և անոր օրինակին և ընթացքին հետեւելով (Եբր . ԺԲ . 2 .) մեր այս աշխարհի վաղանձիկ կենաց օրերն Աստուած-պաշտութեամբ անցունել և ըստ հաճոյս Տեառն գործել :



## ԴԱՍ Դ.

Պայազատաց Փոխարքայից ,  
Նախարարաց եւ Վեհ Ազանց .  
Կուռակալաց եւ Բդեշխաց ,  
Դատաւորաց եւ Դատողաց :

Աւետարան անգին Մատեան ,  
Զքնաղ կտակ այն Յիսուսեան :


4. - ԵՒ ՈՐՈՒ ՄԻԶՈՅՈՒ ՊԷՏԲ Է ՈՒՍԱՆԻ .

4. - Դարձեալ պարտաճանաչուեցին մեզ կ'ուսուցանէ Տիեզերաց Արարչի շնչով ներշնչուած և ընտիր Անձերու միջոցով խօսուած ու գրուած Ս .

Գրոց վկայութեամբ, զոր Հին և Նոր Կտակարան  
կ'անուանուի. վասն զի Սատուծոյ իւր ժողովրդոց  
հետ ըրած Սոստումներն, Պայմաններն, Կտակներն  
և Սւանդած բոլոր պատուերներն կը պարունակէ.  
և ճշմարտապէս կը վկայեմք որ չ'կայ աշխարհի  
մէջ այս տեսակ ուրիշ Մատեան մը, զոր այսչափ  
ճշգրիտ ստոյգ լինի իւր բոլոր պարագայներովն.  
զի ըսինք միակայն Սատուծոյ շունչովն և ազդե-  
ցութեամբն դրուած է. չ'կայ որ և իցէ մի կետ  
որ խտելի և անընդունելի լինի բոլոր Քրիստոնէից,  
եթէ կը հաւատամք թէ Արարիչ մը կայ և նորին  
որդին Յիսուս Քրիստոս երկինքէն յ'երկիր խոնար-  
հեցաւ և մարմին առնելով մեզ նման մարդ եղաւ  
և զմեզ սատանային գերութենէն ազատեց. պէտք  
է հաւատամք որ յիշեալ Մատեանն անզուգական է  
և ոչ ոք կարող է նոյն ճշմարտիկ Մատենի հաւա-  
սար դասել որև իցէ գրեանք մինչ ցարդ չէ գըտ-  
նուած և յաւիտեան չի պիտի գտնուի. Արդ հա-  
ւաստի լինելով սոյն ճշմարտութեան և քաջ ճանչ-  
նալով սոյն մատենի յարգն միշտ մեր առ օրեայ դա-  
սերն թող լինին նորա էջերն ու համարներն և ա-  
սով պիտի ուսանիմք թէ պատուիրանապահ լինել  
պարտ է մեզ հանապաղ:

Առ այս կը վկայէ նոյն ինքն Քրիստոս: «Հոգին  
է կենդանարար, մարմին ինչ ո'չ օգնէ. դրանան  
զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ Հոգի է և Կեանք»  
(Յովհ. Զ. 64:) Եւ կրկին կը վկայէ «Քննեցէք զգիրս  
Ձի դուք համարիք նոքօք ունիլ զկեանան յաւիտե-

նականս : Եւ նոքին իսկ են . որք վկայեն վասն իմ ,  
որովք համարիք ունիլ կեանս» (Յովն . Ե . 39 :) Ու  
խիստ շատ վկայութիւններ ևս կան , որոնք ասա  
մի առ մի յիշել աւելորդ է և անպատշաճ . կար-  
ծեմ կրցանք բացատրել ձեզ համայն ընթերցողացդ ,  
թէ պարտաճանաչութիւն միմիայն մարդ Ս . Գիր-  
քէն կրնայ սորվիլ և ոչ ուրիշ գրքերէ . վասն զի  
Ս . Գիրքն է բոլոր գրեանց աղբիւրն , գեան լաւ  
ևս ըսելով Ովկիանոսն . Ուստի ինչպէս բոլոր գե-  
տեր , առուակներ , աղբիւրներ դէպ 'ի Ովկեան կը  
հոսեն . նոյնպէս բոլոր գրեանք Հին և Նոր կտա-  
կարանի ճշմարիտ վարդապետութենէն բղխեալ են  
և կը բղխին միշտ ու յաւիտեան . Մեք մեր հո-  
գեւոր ծարաւն ուրիշ միջոցով չ'եմք կրնար ան-  
ցունել , զովացունել . այլ միայն նոյն Մատեանէն  
և քանի որ մեք կ'զգամք թէ բարոյապէս ծարա-  
ւեմք Աստուածային բանից , առ այն դիմեմք ա՛յս  
միմիայն առ այն որ մեր հոգեւոր ծարաւն անցնի  
և մեք կարօտ չ'ի լինիմք ուրիշ ջուրերու մեր ծա-  
րաւն անցնելու ու զովացնելու , քանի որ մեր քով  
ունիմք :





Գ. Լ. ՈՒՆԻՄ Գ.

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԻԱՆՑ ՅԵՐԿՐԻ.

Դ. Ա. Ս Ա.

- 1.- Մարդիկ ի՞նչպէս կը ծնին :
- 2.- Ի՞նչպէս կ'ապրին :
- 3.- Ի՞նչպէս կը մեռնին :
- 4.- Երկրի վերայ ի՞նչպէս պետք է ապրին :
- 5.- Յետ մահուան ո՞ւր պիտի երթան :
- 6.- Հոն կրնա՞ն մեկզմեկ ճանաչել :
- 7.- Եւ մինչեւ ցե՞րք պիտի սպասեն :
- 8.- Արդարք ու մեղաւորք ո՞ւր պիտի երթան .
- 9.- Հոն ի՞նչ պիտի ըլլան :
- 10.- Եւ մինչեւ ցե՞րք :

Խորհրդականաց խորհողաց ,  
 Անդամոց Անդամակցուաց .  
 Բժշկաց Բժշկապետաց .  
 Ուսուցչաց Ուսուցչապետայ :

Աւետարան անգիւտ Մատեան ,  
 Ողջոյն պայման այն Աստուածեան :

1.- ՄԱՐԳԻԿ Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ՅՆԻՆ.

1.- Ընդհանուր մարդկանց ճնունդ մի օրինակի՝ ինչպէս կը ծնի թաղաւորն , նոյնպէս կը ծնի

աղքատն , ինչպէս կը ձեւակերպուի Երեխայն իւր  
մօր արդանդին մէջ և որչափ ժամանակուան հա-  
րուատին . նոյն եղանակաւ և նոյնչափ ժամանա-  
կուան մէջ մուրացկանին Երեխայն . մարդուս ծը-  
ննդեան եղանակն բնաւ տարբերութիւն չ'կրնար  
ունենալ . այլ բոլորն հաւասար կերպով կը ծնին և  
կ'ուզան յաշխարհ , սակէն տեսակ մարմնաւոր ձեր-  
քերու յատկութիւններն և հոգեւոր բոլոր շնորհ-  
ներն 'ի վերջոյ ստանալու . բայց անդամոց կազմա-  
կերպութիւններն սակեայն կատարելութեամբ նոյն  
կը լինի , ինչպէս կը տեսնեմք մեզ նման արարած-  
ներու կազմութիւնն . բայց երբեմն կրնայ ըլլալ որ  
մարմնոց անդամոց մասերէն մին կամ աւելին խան-  
գարուած լինին այդ ալ Մարց անհոգութեան ար-  
դիւնքն է և ոչ ուրիշ . ըսել է աշխարհի Բանական  
և Անբան Սրարածոց , Անասնոց , Թռչնոց , Սողնոց  
և այլն և այլն . . . Ծնունդն միակերպ է ըստ իւր-  
եանց տեսակի և չէ տարբեր միոյն ծնունդն միւ-  
սէն , իւրաքանչիւր սեռի ու տեսակի համաձայն :



## ԴԱՍ Բ.

Մեծամեծաց եւ Փարթամաց,  
Մեծատանց եւ Գանձապետաց,  
Վաճառականաց եւ Մեծաց,  
Արհեստաւորաց եւ Փոքունց :

Աւետարան անգիւտ Մատեան,  
Ողջոյն պայման այն Աստուածեան :

2. — Ի՞նչ Պէ՛տ Կ'ԱՊՐԻ՛ն.

2. — Մարդկանց ապրելու եղանակն տարբեր է և մին միւսին չի համապատասխանէր՝ այսինքն ոմանք կը լինին Թագաւոր. ոմանք Աղքատ. ոմանք Հարուստ. ոմանք Թշուառ. ոմանք Վաճառական և ոմանք Արհեստաւոր և այլն . . . Վասն զի եթէ բոլոր մարդիկ Թագաւոր լինէին, ո՞վ պիտի լինէր ժողովուրդ. եթէ բոլոր մարդիկ վաճառական լինէին, ո՞րոնց պիտի վաճառէին իւրեանց ապրանքներն. եթէ բոլորն աղքատ լինէին, ո՞վ պիտի լինէր նոցա օգնական ու խնամող. ըսել է՝ մէկ խօսքով աշխարհի համար ամէն ինչ հարկաւոր է և մին միւսին օգնութեան կը կարօտի. նոյն իսկ Թագաւորք կը կարօտին ամէն կարգի անձանց. և համայն անձինք՝ Թագաւորաց. ժողովուրդք՝ Մեծատանց. և Մեծատունք՝ ժողովրդոց և այլն և այլն . . .  
Եւ ըստ Սրբազան Առաքելոյն (Ա. Կորնթ. ԺԲ. 17-31.)

Մարդիկ տարբեր կ'ապրին՝ այսինքն Պաշտօնին  
տարբեր տարբեր են։ Տայց ուտելու , ըմպելու , շքր-  
ջագայելու , ննջելու և այլն . . . մի և նոյն ձեւք  
ուտեստիք են և ոչ տարբեր . սակայն ասոնց մէջ  
եւս կան բացառութիւններ , որոնք մի առ մի յիշել  
ընթերցողաց տաղտկութիւն կը սլատճառէ . մարդ-  
կանց աշխարհի կենսակցութեան եղանակն մի և նոյն  
չ'է . այլ տարբեր տարբեր , ըստ իւրեանց կամաց ,  
հաճոյից ու դադափարաց :



## ԴԱՍ Գ.

Ծերոց տիոց եւ Չառամաց ,  
Երիտասարդաց Պատանեաց .  
Չափահասից եւ Անչափից ,  
Առ հասարակ Մեծաց Փոքունց :

Աւետարան անգիւտ Մատեան ,  
Ողջոյն պայման այն Աստուածեան :

3 .- ԻՆՉՊԷՍ ԿԸ ՄԵՌՆԻՆ .

3 .- Ըստ Իմաստնոյ . Մարդիկ հաւասար կը ծը-  
նին , տարբեր կ'ապրին և հաւասար կը մեռնին .  
Մահ ամէն արարածի մի և նոյն կերպով կ'իջխէ և  
համայն արարածք չ'են ազատ մահէ . և ով որ ծնած  
է անիկա մահէն ազատ չ'է և չի կրնար ազատ լինիլ .

քանի որ Աստուած Նախամարդուն սոյն վճիռն  
տուաւ (Մատթ. Գ. 19.) աշխարհի ստեղծմանէն  
մինչեւ ց'այժմ չ'է եղած մահէն ազատող . բայց 'ի Ե-  
նովքէն (Մատթ. Ե. 24) և Եղիայէն (Գ. Թագ. Բ. 11.)  
որոնք մահուան համբ չ'առին . և նոյն իսկ Քրիս-  
տոս մեռաւ ու թաղուեցաւ դերեզմանի մէջ և մա-  
հուան համբ ճաշակեց , (Մատթ. ԻԷ. 50-61.) որ  
կատարուի իւր կատարեալ մարդ ու կատարեալ  
Աստուած լինելն . Տես (Նիկիոյ Հանգանակն) և Եսայ .  
Է. 14) և (Մատթ. Ա. 20-22.) Մահէն ո՛չ ոք ա-  
զատ լինելուն կը վկայէ Մարգարէն : « Ո՞վ է մարդ  
որ կեցցէ՝ և ոչ տեսցէ զմահ , կամ փրկեցցէ զանձն  
իւր 'ի ձեռաց դժոխոց » (Մատթ. ԶԳ. 45.) Մարդ-  
կանց մահն ալ մի և նոյն է . վասն զի ինչպէս կը  
մեռնի Հարուստն , նոյնպէս կը մեռնի Աղքատն .  
ինչպէս Մեծն նոյնպէս Փոքրն . ինչպէս Այրն , նոյն-  
պէս Կինն . ինչպէս Որդին , նոյնպէս Դուստրն և  
այլն և այլն . . . չ'իք տարբերութիւն և չ'իք խտիր  
ընդհանուր մարդկային Ազգի . Ուրեմն աշխատիմք  
բարի մահուամբ մեռնելու , որ երկինք զմեզ սը-  
սակէ իւր անանցանելի փառօք ու յաւիտենական  
երջանկութեամբ (Մատթ. ԻԵ. 34.)

## ԴԱՍ Դ.

Աւետարան է Փրկութիւն ,  
հովաւ է Կեանք Արքայութիւն .  
Անանց փառաց է նա Խոստում ,  
Յաւերժ կենաց է նա Ասում :

Աւետարան անգիւտ Մատեան ,  
Ողջոյն պայման այն Աստուածեան :

4. — ԵՐԿՐԻ ՎԵՐԱՅ ԻՆՉՊԷՍ ՊԷՏԻ Է ԱՊՐԻՆ .

4. — Աշխարհ որ մարդու համար սահմանուած է ,  
և մարդ կ'ապրի աշխարհի վերայ Տէր ու Իշխան  
համայն Անասնոց ու կենդանեաց , և ինք այս իշ-  
խանութիւն երբ չարաչար գործածէ և չ'ուզէ իւր  
պարտուց ու իրաւանց հետեւիլ ու գործել ինչ որ  
իւր մարդկութեան կը վայելէ . սկսի իւր դադա-  
փարներն աւելի աշխարհային սնտախ յոյսերուն  
տալ՝ ու ապրիլ երկրի վերայ մարդու կերպարանօք՝  
բայց ո՛չ մարդկան վայել գործերով , նոյն անձ չ'է  
մարդ , այլ բեռ աշխարհի , նախատինք մարդկան  
արհամարանք ժողովրդոց , և ատելի իւր տիե-  
զերաց Արարչի (Սաղմ. ՃԴ. 4 : ) Մարդ ուրիշ նը-  
պատահաւ ստեղծուած չ'է . այլ երկրի վերայ աշ-  
խատիլ՝ գործել իւր նիւթականն հայթայթելու .  
Իսկ բարոյապէս գործել բարիք և ջանալ ինչ որ  
իւր ծարաւ ու նօթի Հոգւոյն անհրաժեշտ պիտա-

նի է . Ինչպէս որ մարմին առանց հացի ու ջուրի  
չ'է կարող ապրիլ , նոյնպէս Հոգին առանց առա-  
քինի ու Աստուածահաճոյ դործերու . մարմին կ'ու-  
ղէ ուտել ապրելու համար , և իւր ամենագլխաւոր  
անունդն է հաց (Սաղմ. ՃԳ . 15 :

Հոգին կ'ուղէ յաւիտեան ապրիլ , որուն սնուն-  
դըն է Արդարութիւն , ճշմարտութիւն ու Խա-  
ղաղութիւն . մեք շարունակ մեր մարմնոյն հա-  
մար կ'աշխատիմք և մեր աշխատանաց վարձքն կը  
նուիրեմք մարմնոյն , որ Հոգւոյն չ'օգնէր (Ժողով .  
Ձ . է .) Մարմին առանց Հոգւոյ չ'է կենդանի , այլ  
անխօս մի դիակ և կերակուր հողոյ (Սաղմ. ՃԽԵ . 3 :

Արդարեւ առաւել է Հոգի քան զմարմին (Ղոռկ . ԺԲ .  
23 :) Ուրեմն ո՞րչափ պէտք է աշխատիմք մեր հոգ-  
ւոյն համար , նորա քաղցն ու ծարաւն անցնե-  
լու բողորովին . ա՛յո ունիմք բանականութիւն՝ որ  
այս անուրանալի է , և կը հաւատամք թէ մարմին  
անկարող է երկնից արքայութեան ժառանգորդ  
լինելու (Ս . Կորնթ . ԺԵ . 50 .) Եւ քանի որ կը հա-  
ւատամք Աստուծոյ ճշմարտութեան պէտք է նաեւ  
հաւատալ թէ մարմնոյ խնամ տանելով և Հոգւոյն  
անխոյժ մնալով խնամ տանելու՝ կը մեղանչեմք Աս-  
տուծոյ մեզ շնորհած Հոգւոյն դէմ . առ այս Ա-  
ռաքեալն կը պատուիրէ . «մարմնոյ խնամ չի տա-  
նիլ» (Հռովմ . ԺԳ . 14 :) Ձի մարմին շարունակ  
հակառակ Հոգւոյ կ'ուղէ դործել և Հոգի մարմնոյ  
(Գաղ . Ե . 17 :)

# ԴԱՍԵ .

Աւետարան դուռ է կենաց ,  
 Անյաղթելի անժիւ Բաջաց .  
 Անհպելի Բազմամեղաց ,  
 Դիւրամատչելի Անմեղաց :

Աւետարան անգիւտ Մատեան ,  
 Ողջոյն պայման այն Աստուածեան :

## 5 .- ՅԵՏ ՄՃՀՈՒԱՆ ՈՒՐ ՊԻՏԻ ԵՐԹԱՆ .

5 .- Երկրի վերայ կը տեսնեմք շատ ժողովուրդ-  
 ներ այլ և այլ կրօնքէ ու այլ և այլ Ազգէ . որոնց  
 ողին ներշնչուած է Արարչէ (Մենդ . Բ . 7 : ) Եւ չ'կայ  
 Արարած մը՝ որ նոյն Արարչէն ստեղծուած չի լինի  
 ընդհանուր մարդիկ կ'ապրին աշխարհի վերայ տար-  
 բեր կրօնքով ու մին միւսին չի համապատասխա-  
 նող գաղափարաւ . թէ և բոլոր մարդիկ կը հա-  
 ւատան թէ աշխարհ ստեղծող էակ մը կայ և  
 նոյն ինքնագոյ , անսկիզբն և անվախճան Աստու-  
 ծոյ շնորհիւ կ'ապրին այս աշխարհի մէջ՝ և առանց  
 նորա հրամանի չ'են կարող շարժիլ ու շնչել գէթ  
 մի բազէ . վասն զի եթէ ուղէ Աստուած կարող է  
 մի վայրկենի մէջ բոլոր մարդիկ ու անասունք ո-  
 ջրնչացնել (Մենդ . ԺԹ . 25 : ) Սակայն իւրաքանչիւր  
 անձինք լինելով որ և է Ազգի ժողովուրդք տարբեր  
 տարբեր կարծիքներով կը խորհին՝ կը մտածեն ,



իւրեանց գաղափար առ այն կը փափաքին յան-  
կուցանել. գտնելու մի ճանապարհ որ զիրենք ա-  
ռաջնորդէ գէտ յերկինք ու յաւիտենական ան-  
ճառելի փառաց ալ ժառանգորդ ընելու մեծ յոյս  
խոստանալով արժանացունէ. և ամէն Քրիստոնե-  
եայ կոչուած Ազգ կը պնդէ թէ ինք է միայն ճշշ-  
մարիտ Քրիստոնեայ և ինք կրնայ արքայութեան  
ժառանգորդ լինիլ. չ'կայ Քրիստոնեայ Ազգ մը որ զինք  
նոյն փառաց անարժան և ժառանգորդ չի դառա-  
նի. վասն զի իւրաքանչիւր կրօնի ժողովուրդք ունին  
իւրեանց ձեռք շին և Նոր կտակարանն. որ տար-  
բեր չի խօսիր և չ'է գրուած մին միւսէն տարբեր  
խմատով. ըսել է իւրաքանչիւր անձ ըստ իւր դա-  
տողութեան կը սեպհականէ. իւր գաղափարի հա-  
մաձայն Ս. Գիրք և կը մերժէ ուրիշ անձերու ըս-  
տացած գաղափարն. առ այս բաժնուած են շատ  
մը տեսակ կրօններ ու Ազգեր, որոնք կրօնի սկզբ-  
բունքն ճիշտ ստացած են Աւետարանէն և կը հա-  
ւատան Աւետարանի ճշմարտութեան, բայց չ'են  
յարգեր նոյն կտակարանի աւանդած սոյն ճշմար-  
տութիւնն: «Ես՝ ըյս յաշխարհի եկի: Զի ամենայն  
որ հաւատայ յիս, 'ի խաւարի մի մնացէ» (Յովն.  
ԺԳ. 46:) Ամենայն բառով պէտք է խնամաք բո-  
լոր մարդիկ. զի այս խօսքով ոչ կրօն և ոչ Ազգ  
բաժանեալ պէտք է լինի, վասն զի ինքն թէև (Իս-  
րայելի կորսուած սշխարհներն խնդրելու եկաւ. ◊)  
(Մատթ. ԺԵ. 24:) Սակայն որոնք որ զինք չ'ըն-  
դունեցին անոնք չ'արժանացան նոյն Փրկչի ոչխա-

բայ գաւիթն մտնելու , որ իւր ոչխարներն լինէին  
(Յովն. Ժ. 1-4 : ) Ձի Ինքն իւր Անձ դրաւ իւր ոչ-  
խարներուն համար . և արդարեւ պէտք է ոչխար  
բառով Մարդ ու Սրարածներն իմանա՞ք՝ որոնք  
բանականութիւն ունին (Ա. Կորնթ. Թ. 9-10 : )  
Իսկ որոնք որ Ձինք ընդունեցին զանոնք իւր Եղ-  
բայրներն անուանեց (Յովն. Ա. 11-19 : ) Գարձեալ  
Ազգ ու Կրօն չ'որոշեց Յիսուս և չ'ըսաւ այս ինչ  
և այն ինչ Ազգէ ու Կրօնէ եղողներն են իմ Եղ-  
բայրներս , այլ որոնք որ Ձինք ընդունեցին Ձանոնք  
անուանեց իւր Եղբայրներն . ըսել է բոլոր Քրիս-  
տոսի հաւատացողք իւր Եղբայրներն են . Մար-  
դիկ պէտք է ճանչնան որ իրենք մեծ ու խիստ  
մեծ պաշտօնի մը կանչուած են և իրականապէս  
պիտի լինին երկնից արքայութեան մէջ հաւասար  
այն Յիսուսին՝ որ յանձն առաւ մեզ մեզաւորացս  
համար Սաշուիլ և հիմակ շօր Աստուծոյ աջ կողմը  
նստած կը բարեխօսէ (Հովնի Ը. 34 : ) Քանի որ  
ընդհանուր մարդիկ ստեղծուած են ու յաշխարհ  
եկած՝ և ունին իւրեանց մէջ Աստուծոյ շունչն ,  
չէ հնար ստեղծուածի մը չի մեռնիլ ու գերեզ-  
ման չի մտնել ըստ մճռոյն Աստուծոյ (Մկնդ. Գ.  
19 : ) Այլ բոլոր մարդիկ մահկանացու են և իւր-  
եանց կենաց օրերն լրացնելով կը փոխուին երկ-  
րէն յերկինք , Թողլով ամէն Հարստութիւն , Իմաս-  
տութիւն , Ճարտարութիւն , գովելի Ձիրք , Ընտա-  
նիք , Չաւակունք . և ամէն ինչ որ աշխարհի մէջ  
ունէին կը պարծէին նոքօք՝ կը խրոխտանային

կը փքանային . միմիայն կը տանին իւրեանց հեա  
'ի գերեզման սրարդ կտաւ մը . վասն զի մարդիկ  
կը ծնին մերկ յաշխարհ . և դարձեալ կ'իջնեն մերկ  
'ի գերեզման (Ա . Տիմ . 2 . 7 .) Մարդկանց մար-  
մին որ Հողէն առնուելով շինուած է (Մենդ . Բ . 7 .)  
դարձեալ հողին իրմէն բաժնուելով՝ մարմինն հող  
սխաի դառնայ (Մենդ . Գ . 19 .) Իսկ Հողին որ Աս-  
տուծմէ արուած է (Մենդ . Բ . 7 .) Դարձեալ Աստու-  
ծոյ քով կ'երթայ (Ժողով . ԺԲ . 7 .) Անշուշտ չ'եմք կըր-  
նար տարակուսիլ . վասն զի Ս . Գիրք կը վկայէ .  
Դարձեալ (Յայտ . 2 . 9-11 .) Մէկ խօսքով մարդ  
երբ իւր երկրաւոր կենաց շրջանն կը լրացնէ՝ կը  
փոխուի երկրէն յերկինք՝ ոչ թէ մարմնով , այլ Հող-  
ւով . զի մարմին կ'իջնէ 'ի գերեզման , իսկ Հողին  
կ'ելլէ յերկինս՝ հոն ուր որ կը բնակին բոլոր Հողիք :



## ԴԱՍ Զ.

Աշխարհն ու Հարստութիւն ,  
 Սին փառք ու սին Մեծութիւն .  
 Մոյի կեանք ու կեցութիւն ,  
 Կ'Ս.Ուաջնորդեն դէպ 'ի Աստ :

Աւետարան ու կրօն ,  
 Կ'Ս.Ուաջնորդեն դէպ 'ի Անդ :

6. — ՀՈՆ ԿՐՆԱ՞Ն ՄԷԿԶՄԷԿ ՃՍՆԱԶԵԼ .

6. — Բոլոր 'ի Տէր ննջողներն , որ երկինք պիտի  
 երթան . հոն պիտի սպասեն մինչեւ Դատաստան  
 իւրեանց գործոց հատուցման , որ Դատաստանի  
 ատեն պիտի յայտնուի (Եբր . 9 . 27 .) Կամ իւրեանց  
 պատիժն պիտի ստանան (Յովն . Ե . 29 .) կամ վարձ-  
 քըն . և գիտեմք որ մէկգմէկ պիտի կարողանան  
 ճանչնալ Աւետարանի սոյն վկայութեամբ (Ղոռի .  
 Ժ 2 . 23 :) Սակայն այս ճանաչողութիւն աւելի  
 սրտի խայթ պիտի լինի՝ քան թէ սիրտութիւն և  
 դարման ցաւոց (Ղոռի . Ժ 2 . 25 :) Մարդիկ ո՞րչափ  
 զգուշութիւն ընել կը պարտին որ դատապարտու-  
 թենէ ազատ մնան , այն դատապարտութենէն որ  
 մշտնջենաւ որ պիտի լինի ու յաւիտենական (Մատթ .  
 Ի Ե . 46 :) Քաջ ճանչնալով Առաքեալն թէ Դատաս-  
 տանի ատեն արդար Դատաւորի Գեծութիւնն , ու  
 Մարդասիրութիւնն անկարող են զմարդիկ փրկել

ու ազատել: Կը պատուիրէ մեզ համայնիցս յիշե-  
ցընելով սոյն ճշգրիտ խօսքն: «Ահ մեծ է ան-  
կանիւ 'ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ» (Երր. Ժ. 31)  
այն Աստուծոյ որոյ «Եղիցի» բառով ստեղ-  
ծուեցան համայն Արարածք և իսկ Տիեզերք  
(Մենդ. Ա. 3-26:)

**Դ.Ա.Ա.Է.**

Նաւն եւ իւր Նաւավար,  
Ղեկն եւ իւր Ղեկավար.  
Կամօքն եւ իւր կամավար,  
Կ'Առաջնորդեն դէպ 'ի Աստ:

Աւետարան ու Կրօն,  
Կ'Առաջնորդեն դէպ 'ի Անդ:

7. — ԵՒ ՄԻՆՉԵՒ Տ'ԵՐԲ ՊԻՏԻ ՍՊԱՍԵՆ.

7. — Աշխարհ ստեղծագործուելէ մինչեւ ց'արդ  
և իսկ մինչեւ Գատաստան բոլոր Արարածոց  
Բանական ու Անբան Մտւնդ՝ ու Մահ կայ. կը  
ծնին յաշխարհ՝ կ'ապրին իւրաքանչիւր անհատք  
սահմանուած օրինօք և կանոնիւք. մինչ ց'արդ  
անթիւ անհամար Արարածներ ծնած, ապրած և  
ննջած են. իւրեանց նեխեալ մարմին դերեզման  
թողլով՝ կրկին հող դառնալու (Մենդ. Գ. 19:): Իսկ  
իւրեանց անմահ Հոգիք սաւառնելով դէպ յեր-

կինք փոխուած են և այժմ կան ու պիտի սպասեն մինչեւ երկրորդ գալուստ Քրիստոսի (Եբր. Թ. 28:) Բայց գալուստն ե՞րբ պիտի լինի և տակաւին ո՞րչափ ժամանակ կայ. այդ միմիայն Հօր Աստուծոյ կամքէն կախեալ է (Մատթ. ԻԴ. 56.) ո՛չ ոք կարող կը լինի ժամանակ որոշել. քանի որ նոյն ինքն Յիսուս չ'ուզեց. և կը յայտնէ մեզ թէ նոյն օրուան որոշումն միմիայն Հօր Աստուծոյ կամքէն կախեալ է. և որչափ որ մեզ համար օրերն աւելի երկարագոյն կը թուին ու նոյնպէս տարիներն, Աստուծոյ քով այնպէս չ'է, այլ նորա համար ոչինչ են մարդոց կենաց տարիներն ու օրերն և չ'ունին նշանակութիւն քանի որ Մարգարէն կը վկայէ (Սաղմ. 2Թ. 3:) Ըսել է բոլոր անմահ Հոգւոց մինչև Գատաստան սպասելն չ'է գժուարին և տաղտկալի. վասն զի աննիւթ Հոգիք կ'ընկերանան և կը խոնին հոն՝ ուր որ Աստուած սահմանած է. և իւրաքանչիւր Հոգի կ'ըստպատէ նորա որոշման և անդառնալի վճռոյն՝ զոր արդար Գատաւորն պիտի վճռէ (Մատթ. ԻԵ 34-42:)



## ԴԱՍ Ը.

Չեռն եւ իւր Չեռագործ ,  
Արծաթն եւ իւր Արծաթագործ .  
Ոսկին եւ իւր Ոսկեգործ ,  
Կ'առաջնորդեն դէպ 'ի Աստ :

Աւետարան ու կրօն ,  
Կ'առաջնորդեն դէպ 'ի Անդ :

Տ .- ԱՐԴԱՐԻ ՈՒ ՄԵՂԱԻՈՐԻ ՈՒՄ ՊԻՏԻ ԵՐԹԱՆ .

Տ .- Որոնք որ աշխարհի մէջ բարիք դործած են  
և իւրեանց կենաց իւրաքանչիւր վայրկեաններն  
չ'են վատնած . աշխարհային սին փառքերու , ու չ'են  
չաղախուած ամէն տեսակ աղտոզութեանց , որոնք  
զմարդիկ կը մոլորեցնեն և կը դրկեն Աստուածա-  
յին երջանութեան Դրախտէն (Ս . Կորնթ . Զ . 9-10 : )  
Այլ իրր բանական էակք ճանչնալով իւրեանց պար-  
տիք և զգալով իւրեանց պարտաճանաչուած իւր  
աշխարհի մէջ ապրած են միշտ Աստուծոյ պա-  
տուիրանաց համաձայն յաջ և յահեակ չի խտո-  
րելով , ճիշտ մեր հաւատոյ Զօրագլխուն նայելով  
և նորա շաւղաց հետեւելով , ինչպէս անցուցած է  
մեր օրինաց Զօրափարն (Եբր . ԺԲ . 2 .) նոյն անձինք  
անտարակոյս պիտի ժառանգեն աշխարհի սկիզբէն  
պատրաստուած յաւիտեւական անվախճան փառքն  
որ է Արքայութիւն (Մատթ . ԻԵ . 34 : ) Վասն զի

նորա աշխարհի մէջ գործեցին ինչ որ իրենց հա-  
մար պատուիրուած էր և ստացան այն խոստում-  
ներն, զորս կը վկայէ Սուրբ Գիրք (Բ. Տիմ. Գ.  
7-9.) (Յայտ. ԺԴ. 13:) Արդարեւ երանելին են  
այն անձինք ու պիտի վայելեն այն փառքն որուն  
կ'սպասէին և պիտի ստանան այն Արարչէն՝ որ յանձն  
առաւ և հաճեցաւ մարմին առնելով մեզ նման  
մարդ ապրիլ այս անիրաւութեան տան մէջ և մեզ  
Ինքն օրինակ եղաւ կրելով ամէն տեսակ չարչա-  
րանք, նախատինք, արհամարանք և մինչեւ իսկ  
Սաշի վերայ մեռնիլ յանձն առաւ (Ա. Պետ. Բ.  
21-25:) Եթէ կայ երջանկութիւն մը աշխարհի մէջ  
ապրող Արարածոց միմիայն այս է. և ո՛չ ուրիշ՝ չի-  
կայ ասկէ դատ մեզ մխիթարութիւն և ով որ ա-  
ռանց ասոր կը կարծէ երջանկանալ կը սխալի և  
փոխանակ երջանկանալու կորստեան անել ան-  
գունդին մէջ կը գտնէ իւր ասկերջանկութիւն.  
հաւատացէք՝ ո՛վ իմ ընթերցողներս. չի խափուիմք  
աշխարհի շրացեալ նենդութեանց, որոնք զմեզ  
չարունակ իւրեանց ծառայեցնելու կը տքնին և  
կը համոզեն ամէն տեսակ շաղոքորթութեամբ մեզ  
իւրեանց յանկուցանելու, այն չարին՝ որ մարդիկ  
կորուսանելու համար միշտ ամէն ջանք ու աշխա-  
տութիւն 'ի գործ կը դնէ և «Ահեղ առիւծի նման  
կը գոչէ զմեզ կլանելու» (Ա. Պետ. Ե. 8.) այն  
չարն որոյ անուն սոսկալի է և մարդիկ պէտք  
է նորա հրապոյրներէն չի խափուին, որ չի կոր-  
սուին. այս չարն էր որ պատրեց մեր նախամայրն



և զայն կորսնցուց, ա՛յո զգուշանալ պարտ է մեզ համայնիցս նորա որևէ խարուսիկ ու մեզ համար փափաքելի երեւցող որոգայթներէն զերժմնալ . և այս ուրիշ միջոցով չ'եմք կրնար ձեռք բերել միմիայն աղաչելով և արտասուաց յորդահոս կաթիլներ անխնայ հոսելով շարունակ անոր, որ ինք նորա գլուխն ջախջախեց և յաղթեց . տայ մեզ զօրութիւն ու կարողութիւն որ մեք նորա հրապոյրներէն չի խարուելով վանեմք զայն ինչպէս ինք կարողացաւ նորա խարուսիկ հրապոյրներէն չի յաղթուելով վանել (Մատթ. Գ. 1-12):

Իսկ որոնք որ իւրեանց կեանք կ'անցունեն ամէն տեսակ շարութեամբք, նոքա կը գրկուին ու չ'են ժառանգեր այն փառքն՝ զոր Աստուած խոստացած է իւր պատուէրներն պահողներուն (Մատթ. ԻԵ. 34): Առաքեալն եւս կը համոզէ զմեզ աշխարհային շարութենէ զգուշանալ . եթէ ո՛չ կ'ըսէ մեզ «մի խարուիք թէ շարութիւն գործողներն կը ժառանգեն Երկնից Արքայութիւնը .» (Ս. Կորնթ. Զ. 9-10): Նոքա ա՛յո պիտի գրկուին յաւիտենական փառքէն . վասն զի կարծեցին թէ իրենք աշխարհ ծնած են միմիայն իւրեանց մարմնոյ ցանկութիւններն կատարելու, զոր Սրբազան Առաքեալն «մարմնոյ ցանկութիւններու համար խնամ չի տանիլ կը պատուիրէ» (Հռովմ. ԺԳ. 14): Գիտցան թէ աշխարհ ծնած են ուտելու ու ըմպելու համար միայն . Բայց այդ տեսակ գաղափար ու ընթացք ունեցողներն չի պիտի ժառանգեն Երկինք

(Ղուկ . ԺԶ . 19-30 :) Վերջապէս շղագցին իւրեանց Պարտք ու Պարտիք , չի կատարեցին ինչ որ Աստուածային օրէնք կը տրամադրեն . չանսացին Քրիստոսի շնորհաց օրէնքին . այլ միշտ խոնարհեցուցին իւրեանց լսելիքներն աշխարհային չարութեանց քաղցր ու հրապուրիչ ձայնից . աւելի ընտրեցին կորստեան խորխորատն ընկնիլ , քան արժանանալ փառաց ու երջանկութեան . և կորուսին այն փառք որ պիտի երջանկացնէր զիրենք յաւիտեան (Մատթ . ԻԵ . 34 :) Օ՛ն ուրեմն զգուշանամք մեր ոտքեր նոցա շաւղաց մէջ դնելու հեռանամք նոցա ճանապարհներէն , որոնք մեզ կորստեան կ'առաջնորդեն (Առակ . Ա . 10-17.) դարձունեմք մեր ոտքեր այն ճանապարհին որ դէսպէս «՛ի կեանք կ'առաջնորդէ » (Մատթ . Է . 14 :)



# ԴԱՍ Թ.

Փայտն եւ իւր Փայտահար ,  
 Մարմինն եւ իւր Մարմնահար ,  
 Սէրն եւ իւր Սիրահար ,  
 Կ'Առաջնորդեն դէպ 'ի Աստ :

Աւետարան ու Կրօն ,  
 Կ'Առաջնորդեն դէպ 'ի Անդ :

## Թ .- ՀՈՆ. 1<sup>0</sup>ՆԶ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ .

Թ .- Երկրի վերայ՝ ուղիւ վարքով , արդար դոր-  
 ծով , բարի զգացմամբ ապրողներն ժառանգելով  
 երկնից արքայութիւն՝ յաւիտեանս յաւիտենից  
 պիտի ուրախանան , հրճուին , ցնծան այն անմահ  
 Գառին հետ իւր Հարսանեաց մէջ (Յայտ. ԺԹ . 9 :)  
 Ա՛հ ո՞վ կարող է նկարագրել նոցա ուրախութիւն  
 ու ցնծութիւն , դոր կը վայելեն ու պիտի վայե-  
 լեն անմեղ Գառին Հարսանեաց արժանաւոր հրա-  
 շիրեալք . ա՛յո՛ յայնժամ ո՛չ ոք կը կարողանայ բա-  
 ցատրել նոցա ունեցած ու վայելած երջանկու-  
 թիւն , դոր մեք դժբաղտարար սխալմամբ այս ա-  
 պականեայ և տուն անիրաւութեան կոչուած աշ-  
 շարհին մէջ վայելել կ'երազեմք . չ'իք ա՛յո չ'իք եր-  
 ջանկութիւն աստ . անդ է երջանկութիւն . Ա՛յո՛ հոն  
 են աշխարհի սկիզբէն մինչեւ Դատաստան բոլոր  
 ընտրելոց արդար Ոգիք . և նոքա հանապաղ պիտի

վայելեն այն Փրկչի ներկայութիւնն, որուն ձեռաց  
գործքերն են նորա. ի՛նչ երջանկութիւն որ ա-  
րարածք կը վայելեն իւրեանց Արարչի անվերջա-  
նալի փառք ու անսահմանութիւն: Կայ արդեօ՞ք աւ-  
կէ աւելի մեծ ու գովելի փառք, ուրախութիւն,  
ցնծութիւն ու հրճուանք. որ ծառայն իւր Տիրոջ  
սեղանէն վայելէ. և այն Տիրոջ որ զինք հողէն ըս-  
տեղծած է՝ Եւ Արարածի կ'ուտայ այն Պատիւ,  
որ միայն Արարչի կը սեպհականի: Ա՛հ ո՞րչափ  
թշուառ են անոնք որ սոյն ուրախարար Հարսան-  
եաց արժանի չեն և չեն կրնար նորա անդրաւա-  
կան ուրախութեան մասնակցիլ. ա՛յո պիտի տես-  
նեն նոցա նախանձելի միճակ և պիտի դռչեն ա-  
հեղադոշ ձայնիւ օգնութիւն իւրեանց շուառ մի-  
ձակի. ինչպէս դռչեց «Մեծատուն» (Ղուկ. ԺԶ.  
23-25.) Գարձեալ ո՞վ կարող է նկարագրել սոյն  
թշուառ խմբոց ունեցած տոժանելի միճակ. ո՛չ որ  
և արդարեւ ո՛չ որ, չունին ա՛յո չունին անսահ-  
ման Հարսանեաց միջ բաժին. ոչ մի որոշեալ ժա-  
մանակ՝ այլ յաւիտեան. վա՛յ ու վա՛յ անոնց ո-  
րոնք Գառին Հարսանեաց արժանաւոր հրաւիր-  
եալքն չեն ու չունին Հարսանեաց Հաւեղերձ.  
նոցա բաժին է արտաքսութ՝ դէպ ՚ի տանջանք ու  
յաւիտենական դատապարտութիւն (Մատթ. ԻԲ.  
12-14.) Վասն զի չուղեցին իւրեանց ընկերոջ օգնել  
ու ձեռնտու լինել, նոցա ցաւոց ցաւակից, տըրա-  
մութեան միտիթարիչ, նօթութեան կերակրիչ, ծա-  
րաւութեան արբուցիչ, հիւանդութեան այցելիչ,  
մերկութեան զգեցուցիչ, ու բանտարդելութեան  
աղաատիչ (Մատթ. ԻԵ. 41-46.)

# ԴԱՍ Ժ.

Ինչքն եւ իւր Ընչասէր ,  
 Մեղքն եւ իւր Մեղասասէր ,  
 Բանքն եւ իւր Բանասէր ,  
 Կ'Առաջնորդեն դէպ 'ի Աստ :

Աւետարան ու Կրօն ,  
 Կ'Առաջնորդեն դէպ 'ի Անդ :

## 10. — ԵՒ ՄԻՆՁԵՒ ՅԵՐԲ.

10. — Թէ եւ կան Կրօններ աշխարհի վերայ , որոնց մաս մը ժողովուրդներ՝ նոցա Պաշտօնէից տւանդած վարդապետութեանց հետեւելով և զանոնք անսխալ դաւանելով կ'ընդունին և ընդունած են , սոյն սխալ վարդապետութիւնն թէ՛ «Մարդ երբ իւր երկրային կենցաղ կը լրացնէ և երկրէն յերկինք կը փոխուի . կ'երթայ մի վայր որ Քառասուն կը կոչուի . հոն կ'ապաշխարէ իւր մեղաց շափումն և կ'անցնի դէպ 'ի կեանք , որ ասանջանաց վայրն սահմանուած էր իւր պրդար բաժին :» Մեք նոր կտակարանի մէջ այսպիսի վկայութիւն չ'ունիմք և ո՛չ ոք կարող է Մ . Գրոց որ և է համարներէն աղայուցանել , քանի որ Յիսուս վճռողական կերպով կ'ըսէ իւր Ս . Աւետարանի մէջ : «Ամէն ամէն ասեմ ձեզ . զի դոց ժամանակ՝ և արդէն իսկ է . յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ . և որք լուիցեն , կեցցեն : Զի

որպէս Հոյր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս  
եւ Ռրդւոյ ունի կեանս յանձին իւրում: Եւ իշխանութիւն  
եւ նմա Գառաւառան տունել. և զի  
Ռրդի մարդոյ է: Ընդ այն զի՞ զարմանայք՝ զի եկեաց  
ժամանակ՝ յորում ամենեքին որք ՚ի դերեզմանս  
կայցեն, լուսիցեն ձայնի նորա: Եւ եկեաց  
ցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ ՚ի Յարութիւն  
կենաց. և որոց զչար արարեալ ՚ի Յարութիւն  
Գառաւառանայ:» (Յովհ. Ե. 25-30.) Թագմանութիւն,  
ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ  
պիտի գայ՝ և ալ հիմայ է, երբոր մեռելները լսեն  
Սատուծոյ Ռրդւոյն ձայնը. և անոնք որ կը լսեն,  
պիտի ապրին: Վասն զի ինչպէս որ Հայրը իր  
անձին մէջ կեանք ունի, անանկ ալ Ռրդիին  
տուաւ որ իր անձին մէջը կեանք ունենայ. Եւ  
Գառաւառան ընելու ալ իշխանութիւն տուաւ անոր,  
քանզի անիկայ Ռրդի մարդոյ է: Սաոր վերայ  
ինչո՞ւ կը զարմանաք. Ինչու որ ժամանակ պիտի  
գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները  
անոր ձայնը պիտի լսեն, ու դուրս պիտի գան.  
անոնք որ բարի գործեր են, կենաց Յարութեան  
համար, և անոնք որ չար գործեր են, դատապարտութեան  
Յարութեան համար: Ըսել է չ'կայ Քաւարան. թէ եւ  
նորա Սակտարանի սոյն համարէն կը հաստատեն  
թէ կայ Քաւարան (Մատթ. Ե. 26.) Սակայն մեք  
բանտ բառն պէտք է իմանամք աշխարհս  
(Սարգ. ձեռն. 7.) եւ ոչ Քաւարան. Քրիստոս  
նոյն համարով ըսել ուզեց ըստ քաղա-

քահան օրինի՝ եթէ մի անձ ունի մի անձի սպարաք  
նոյն սպարաքէն չ'կրնար ազատ լինիլ ու բանտէն  
արձակուիլ, մինչեւ որ ամբողջ ունեցած սպարաքն  
չի վճարէ. Իսկ բարոյական տեսակետով ըսել ու-  
ղեց թէ՛ քանի որ Հոգիդ մարմնէդ բաժնուած չէ  
սէտք է հաշտութիւն ընես անոր հետ, և մինչեւ  
Հոգւոյդ քեզմէ բաժնուելու վերջին փոյրկեանն՝  
եթէ Հոգւոյդ ամենափոքր մի սպարաքն կատարած  
չես չես կրնար յաւիտենական դատաւարտութենէն  
ազատ մնալ ու ազատիլ. ոսոյս բառով ևս սէտք է  
մարմինն խնայ (Ղոսկ. ԺԸ. 3:) Գարձեալ չ'կայ  
Ս. Գրոց մէջ սոյնալիսի մի համար որ վկայէ թէ՛ երբ  
մարդ կը կնքէ իւր մահկանացու կեանքն մարմնով  
երկինք կը փոխուի. եթէ գտնուէր սոյնալիսի մի  
վկայութիւն. յայնժամ սէտք էր հաւանականա-  
բար հաւատալ թէ երկնից մէջ մարմինն ու Հոգին  
ի միասին լինելով կը լինի ճիշտ կատարեալ մարդ՝  
ու հաւատալի է թէ կրնայ ապաշխարել. վասն զի  
առանց Հոգւոյ մարմինն է մի անշունչ դիակ.  
նոյնպէս առանց մարմնոյ Հոգին է Հրեշտակ և ո՛չ  
մարդ. առ այս չ'կրնար Հոգին ապաշխարել ու  
տանջուիլ. զի ինքն աննիւթ է և անապակա-  
նելի, չէ հարկ նորա յատկացունել ապաշխա-  
րելու տխրոսն. եթէ Հրեշտակաց սէտք է ա-  
պաշխարել, սէտք է Հոգւոյ ապաշխարութիւն.  
և քանի որ Հրեշտակք են յերկինս և անմեղ, չ'իք  
ապաշխարութիւն և չ'իք Քաւարան: զի սա է  
ընդհանուր ճշմարտութիւն. թէ՛ երբ մարդ կը

մեռնի նորա Հոգին Աստուծմէ շնչուած լինելուն  
կը դառնայ յ'Աստուած, և մարմինն հողէն առ-  
նուած լինելուն կրկին հող պիտի դառնայ:

Քուստի մեք անկարող եմք հաստատելու թէ չար-  
եաց համար մի վայր կայ ու հոն կ'ապաշխարեն.  
Ս' իմ սիրելի ընթերցողք՝ մի խարուիք թէ՛ հան-  
դերձեալ աշխարհն ունի Քաւարան, պէտք է  
այն Քաւարանի դոյ լինելուն հաւատ չ'ընծայել.  
այլ հաստատապէս պէտք է համոզուիք թէ՛ Մարդ-  
կանց Քաւարանն այս աշխարհս է և ոչ երկնից  
մէջ՝ եթէ որեւէ անձ չ'ուզէ ապաշխարել մինչեւ  
իւր կենաց վերջին օրն և անապաշխար փոխուի  
երկրէն յերկինք, նոյն անձ մինչ երկրորդ գալուստ  
պիտի սպասէ իւր յաւիտենական պատիժն ըն-  
դունելու (Մատթ. ԻԵ. 41): Սորին հակառակ ե-  
թէ մի անձ կ'զգուշանայ այս աշխարհի շարու-  
թեանց հետամուտ լինելէ և կը գործէ միշտ բար-  
իք, եւ եթէ սխալմամբ ևս մեղանջէ, շուտով կ'ա-  
պաշխարէ ինչպէս «Պետրոս» (Մատթ. ԻԶ. 75):  
Վասն զի այն որ ևս աշխարհի մէջ մեղք չեմ գոր-  
ծեր կ'ըսէ «սուտ կը խօսի» (Ս. Յովն. Ա. 10) ու  
նորա մէջ հշմարտութիւն չ'կայ. այսպիսին երբ իւր  
մահկանացուն կը կնքէ իւր Հոգին երկինք երթա-  
լով կ'ապասէ Տիրոջ Բառաստանի գալտեան օրումն  
որ իւր արդար հատուցումն բնդունի. (Մատթ. ԻԵ.  
34): Եւ քանի որ մի մեղաւորի վարձք յաւիտե-  
նական տանջանք է. ու մի արդարի վարձք յա-  
ւիտենական երջանկութիւն. ըսել է համայն



մեղաւորք յաւխտենաւան տանջանաց կ'արժանա-  
նան և համայն արդարք յաւխտենաւան երջանկու-  
թեան . սակէ դատ չ'կայ ուրիշ մի միջոց որ մարդ-  
կարողանայ ազատ մնալ Գառապարտութենէ . և  
ով որ կը փնտռէ սոյնպիսի մի միջոց անհունա կը  
սխալի և փոխանակ գտնելու կը կորսնցունէ իւր  
պատեհառիթ ժամանակն ու ժամն . աշխարհ որ  
մարդկանց համար Բաւարան է ըսինք . կը պար-  
տին բոլոր արարածք իւրեանց մեղքերն քաւել  
սոյն Բաւարանի մէջ , յորդահոս արտասուքներ թա-  
փելով միշտ Աստուծոյ ու նորա սիրելի Սրբւոյն  
Յիսուսին առջեւ . ինչպէս որ ջուրն անէն տեսակ  
ազտեղութիւններն կը մաքրէ , նոյնպէս կատար-  
եալ զզջացեալ սրտով եղած արտասուքներն կը  
ջնջեն կը մաքրեն մեղաց ճանձախարիթներն և  
կ'ընեն իրրեւ զձիւն սպիտակ ու մաքուր . ինչպէս  
(Մարիամին) (Ղարխ. է. 37-50:) Յետ առաի՛ մարդ-  
կանց անապաշխար մեռնելէն վերջ՝ ոչ փրկեալք կը  
կորսուին ևւ ոչ կորուսեալք կը փրկուին . ինչպէս  
որ երկրէն յերկինք կը փոխուին նոյն կը մնան ա-  
ռանց սրեւէ փոփոխութեան . սայ երկինք որ բո-  
լորս ալ մեր մեղքեր այս աշխարհի Բաւարանի մէջ  
ապաշխարելով ըլլամք պատրաստ մեր տան Տիրոջ  
կոչելու վայրկենին ուրախ , զուարթ ելլեմք յեր-  
կինք փառարանիչք վնխմք , այն անհամար Արբոց  
հետ՝ ու որհնեմք անմահ Գառն Յաւխտեանն Յաւի-  
տենից (Յայտ . Ե . 11-14:)







Գին Ա. Հատորի 5 Դրոշ

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Բ. Հատոր Պարտաճանաչութեան  
Գ. Հատոր Պարտաճանաչութեան

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیلہ طبع اولتمشدر





1669-1678

10  
2

<< Ազգային գրադարան



NL0025848

8485200

8485200

5  
2

<< Ազգային գրադարան



NL0025843

5  
2

<< Ազգային գրադարան



NL0025847

8485200

8485200

4  
2

<< Ազգային գրադարան



NL0025842

8  
2

<< Ազգային գրադարան



NL0025846

8485200

8485200

5  
2

<< Ազգային գրադարան



NL0025841

7  
2

<< Ազգային գրադարան



NL0025845

8485200

8485200

2  
2

<< Ազգային գրադարան



NL0025840

9  
2

<< Ազգային գրադարան



NL0025844

8485200

8485200

1  
2

<< Ազգային գրադարան



NL0025839

